

## ՇԱՐՈՆ ԿԱՅՐԱԳ ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ ՏՈՒԱԻ ՊԵՅՐՈՒԹԻ ՎԵՐԱԺՈՂՈՎԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ

ԿԸՄԷ ՉՕՐ. ԼԱՀՈՒՆԻ



ՉՕՐ. ԼԱՀՈՒՆԻ Կ'ԸՆԴՈՒՆԻ Ա. Լ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՏՈՒԽՐԱԿՈՒԹԻՆԸ:

Նախագահ ՉՕՐ. Էմիլ Լահուտ երէկ հաւաստեց, որ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի պաղեստինեան շրջաններուն դէմ շղթայագերծած լայնածիր յարձակումը Իսրայէլէն ներս անձնասպանական գործողութիւններու դէմ հակազդեցութիւն չէ, այլ պատասխան՝ Պէրոլթի մէջ գումարուած արարական վեհաժողովի որոշումներուն:

«Այս ժողովը իր որոշումներով կարեւորագոյն արարական վեհաժողովներէն հանդիսացաւ, որովհետեւ արծարծուած բոլոր հարցերուն եւ տրուած որոշումներուն մէջ արտայայտուած է միջարարական ամբողջական գործակցութիւն, որուն միջոցով արարները աշխարհին ցոյց տուին իրենց իսկական ուժի աղբիւրը, ա՛յս զօրակցութիւնը»:

Արար Լահուտը ներքին Միութեան ընդհանուր քարտուղարութեան պատուիրակութիւնը ընդունած ստեղծ նախագահ Լահուտ նաեւ նկատել տուաւ որ արարական երկիրները վեհաժողովին ցոյց տուին, որ հակառակ իրենց ուղղուած զրպարտութիւններուն, կ'ուն-

են արդար եւ ամբողջական խաղաղութիւն միջազգային որոշումներուն հիմամբ, մինչ Շարոն իր յարձակումով ցոյց տուաւ, որ կը մերժէ նման խաղաղութիւն:

«Եւրոպական պետութիւններու եւ Միացեալ Նահանգներու կեցածքներուն փոփոխութեան պատճառով, Շարոն կը յայտարարէ իր պատրաստակամութիւնը՝ քննարկելու խաղաղութեան արարական նախաձեռնութիւնը: Բայց ստոր դիմաց կը պահանջէ քննարկելի դարձը: 1967ի սահմաններն ու պաղեստինցի գաղթականներու տուեղարձակումը, այլ խօսքով՝ Շարոն յստակօրէն կը մեր-

## ՔՈՒՆ ՓԱՌԷԼ ԱՅՍՕՐ ԵՐՈՒՍԱԴԵՍԻ ՄԷՋ ԿԸ ՏԵՍԱԿՑԻ ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆԻ ՇԵՏ

## ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԵՐՁԱՆԵՐՈՒՄՆ ԵՄՁ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԻՆ ՍԱՆՁԱՐՁԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ

Իսրայէլեան բանակը, որ ամերիկեան ճնշումներու կ'ենթարկուի վերջ տալու համար պաղեստինեան շրջաններուն դէմ յարձակողականին, երէկ նոր յարձակումներու ձեռնարկեց Այսրյորդանանի մէջ: Սակայն բանակը յայտնեց, որ 24 զիւղերէ ալ քաշուած է:

Պաղեստինցի պաշտօնատարներ ըսին, որ քանի մը զիւղերէ հեռանալով՝ Իսրայէլ քարոզչական աշխատանք կը տանի Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլի Երուսաղէմ ժամանելու նախօրեակին: Պաղեստինցիները կ'ըսեն նաեւ, թէ ինչ իմաստ ունի քանի մը զիւղերէ հեռացումը, երբ Այսրյորդանանի մեծագոյն քաղաքները կը



Հայոց Ս. Յակոբայ վանքի շրջակայքը՝ Ծուխերու մէջ:

մնան պաշարուած ու արտաքին աշխարհէն խզուած՝ սպասելով իս-

րայէլեան հրատայներուն հետեւան:

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն, որ բանակին կանաչ լոյս տուած է պաղեստինեան քաղաքներուն ու զիւղերուն դէմ լայնածիր արշաւի մը, որոշած է ի գին ամէն ինչ շարունակել գործութեան դաշնակից Ուաշինգթոնը արմատահան ընելու համար պաղեստինեան «հարեկազական» շարժումներն ու անոնց հետեւողները: Նախագահ Ճորճ Պուշիֆ անմիջապէս հեռանալու պահանջներ զիմաց, Շարոն անզորութիւն կը մնայ: Ան կ'ըսէ, որ շուտով պիտի դադարէ ետք վերականգնելու գործողութիւնը՝ առանց ընդհանուր անյապաղ հեռանալու կոչին:

Բանակը երէկ ներխուժեց Պիր Զէյթ եւ Տահարիա քաղաքները, ինչպէս պաղեստինցիներուն միջոցով: Պաղեստինցի զինուոր բանազանց Սաէպ Ուրաբայի յայտնեց, որ պաղեստինեան շրջաններուն դէմ իսրայէլեան յարձակողականին ձեռնարկումէն (Մարտ 29) ի վեր, իսրայէլեան բանակը մատուցած է հինգ հարիւր պաղեստինցիներ սպաննած է:

Շար.ը՝ էջ 10

## ՇԱՐՈՆ ԿԸ ՄՊԱՌՆԱՅ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն երէկ ամերիկեան պատկերասփիւռի կայանի մը տրուած հարցազրոյցի մը մէջ նոր սպասուած խաղաղութիւնը կը քննարկէ: Շարոն ըսաւ, որ Իսրայէլի հիւսիսային սահմաններուն վրայ Հրպայիսի յարձակումներու շարունակումին կրնայ յաջորդել իսրայէլեան խիստ պատասխան մը:

Շարոն յայտնեց, որ Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Տիք Չէյնիին խնդրած է այս պարագային իսրայէլի փոխանցելու Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի, բայց ցարդ ոչինչ փոխուած է:

Միւս կողմէ, իսրայէլեան «Ետիզթ Սիռնոթ» օրաթերթը երէկ հաղորդեց բարձրաստիճանի իսրայէլացի սպայի մը այն հաստատումը, որ եթէ Իսրայէլի հիւսիսային, Լիբանանի հետ սահմանին վրայ կացութիւնը «պայթի», ապա Իսրայէլ պիտի մտածէ Լիբանանին ներս ցամաքային թափանցում կատարելու մասին, հեռացնելու համար կրակակէտերը, նկատի առած որ Իսրայէլի սահմանային բնակեցման վայրերը Հրպայիսի գնդապետներու հաստատութեան մէջ են: «Նման պարագայի, նաեւ հակահարուած պիտի տրուի սուրիական թիրախներուն», ըսաւ ան:

## ՐՍՏ ԿՐԱՑԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

### ՌՈՒՍԱԿԱՆ ԽԱՐԻՍՏԸ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ՀՐԱՀՐԷ ԶԱԽԱՔԻ ՄԷՋ

Պաշտօնի մէջ 9 Ապրիլին կայացած են վրաց-ազերիական բանակցութիւններ, մասնակցութեամբ երկու երկիրներու պաշտպանական գերատեսչութիւններու պետերուն: Բանակցութիւններէն ետք կայացած մամուլի ասուլիսի մը ընթացքին Ազրպէյճանի պաշտպանութեան նախարար Ապիբե յայտարարեց, որ երկու երկիրներու գործակցութիւնը պիտի ընթանայ «հարեկազական եւ անջատողականութեան դէմ պայքարի, ինչպէս նաեւ երկու երկիրներու բանակներուն միջեւ համագործակցութեան գարգացման» ուղղութեամբ: Ան յատկապէս կարեւոր նկատած է զոչային պաշտպանութեան ծիրէն ներս համագործակցութիւնը:

Իր կարգին, Վրաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Դեզաւաձէ խօսած է Վրաստանի մէջ գտնուող «ռուսական զինուորական խորհրդի ժխտական դերին մասին, ինչ կը վերաբերի Զաւաբի Հայ բնակչութեան մէջ անջատողականութեան տարածման»: Դեզաւաձէ չէ բացառած «զինուորական այդ խորհրդին գէնքերու փոխադրումը անջատողականներուն»: «Խորհրդի գէնքերուն վրայ իսկական

Շար.ը՝ էջ 9

## ՊԱՔՈՒԹԻ ՄԷՋ ԲԱՍՏԱԼ ԽԱՐԱՉԻ ՏԵՍԱԿՅԵՅԱԻ ՀԱՅՏԱՐ ԱԼԻԵԻ ՀԵՏ

Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ Խարազի երէկ Պաքուի մէջ հանդիպում ունեցած է Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւի հետ: Հանդիպումին ընթացքին Խարազի Լեոնային Ղարաբաղի տագնապի լուծումը անհրաժեշտ համարած է շրջանին մէջ տնտեսական համագործակցութեան գարգացման համար: Լեոնային Ղարաբաղի տագնապը նկատելով «չրջանի մեծամեծ խնդիրներէն մէկը», Իրանի արտաքին գործոց նախարարը յայտնած է իր երկրին պատրաստակամութիւնը՝ օժանդակելու տագնապի լուծման, որուն կրնան նկատուել «Իրանի լաւ յարաբերութիւնները, ինչպէս Ազրպէյճանի, նոյնպէս Հայաստանի հետ»:

Ալիեւ ողջունած է Լեոնային Ղարաբաղի տագնապի լուծման միջոցները աշխուժացնելու Իրանի պատրաստակամութիւնը: «Մենք միշտ դրացի Իրանի օգնութեան եւ աջակցութեան կարիքը ունեցած ենք այս հարցին մէջ», ըսած է Ալիեւ:

Միւս կողմէ, լրագրողներու տրուած հարցազրոյցի մը ընթացքին, Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիլայեթ Կուլիբե ըսած է, թէ Իրանը, ինչպէս Ազրպէյճանը, պետք է շահագրգռուած ըլլալ Լեոնային Ղարաբաղի տագնապի լուծմանը, որովհետեւ «ատիկա վտանգ կը ներկայացնէ ամբողջ շրջանին համար»: «Մենք դէմ չենք խաղաղութեան գործընթացին մէջ Իրանի աւելի գործօն դերակատարութեան», աւելցուցած է Կուլիբե:

«Թուրան» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ իսլամական կուսակցութիւններու նախաձեռնութեամբ եւ մասնակցութեամբ, Պաքուի մէջ Իսրայէլի եւ Միացեալ Նահանգներու դեսպանատուներուն մօտ երէկ տեղի ունեցած են ցոյցեր իբրեւ գործակցութիւնը պաղեստինցիներուն:

«Պուլ եւ Շարոն մարդասպաններ են», «Կեցցէ ազատ Պաղեստինը» կոչերով ցոյցարարները պահանջած են Պաղեստինէն զուրս բերել իսրայէլեան զօրքերը:

Ցուցարարները նաեւ քաղաքացիներ են «Ղարաբաղի բռնագրաւումը սկսաւ Երուսաղէմի բռնագրաւումէն...»:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԵՍՊԱՆ ԱՐԵԳ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՀԵՏ

Երէկ առաւօտուն, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւն մը այցելեց Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Արեգ Յովհաննիսեանին:

Աւելի քան մէկ ժամ տեւած հանդիպումին ընթացքին արծարծուեցան շրջանային քաղաքական խնդիրներ:

Խօսակցութեան նիւթ դարձան նաեւ ի մօտոյ գումարուելիք Հայաստան - Սփիւռք խորհրդածողովի նախապատրաստական աշխատանքները:

Շար.ը՝ էջ 9

12-18 ԱՊՐԻԼ 2002

# ԵՐԿԻՐ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

«Երկիր»-ի վաղուան թիւին երկրորդ էջով, Հայաստանի Ազգային ժողովի 2. Յ. Գ. խմբակցութեան ներկայացուցիչ Աղուան Վարդանեան «Պարզ զրոյցի փորձ» բաժնին մէջ կը շարունակէ իր խորհրդածութիւնները 2. Յ. Դաշնակցութեան ազգային հարցերու գծով ունեցած տեսկետներուն շուրջ: Անոր այս անգամուան գլխաւոր նիւթն է արդար հասարակութիւնը եւ տնտեսութեան ու ընկերային կեանքին մէջ արդարութեան ըմբռնումը:

4րդ էջով տրուած «Արմէնիայի լաբիրինթոս» յոդուածով «Երկիր» կ'անդրադառնայ Հայաստանի Ազգային ժողովի յառաջիկայ եռօրեայ ընթացքին «Արմէնիայ»-ի հարցով ստեղծուած խորհրդարանական ժամանակաւոր յանձնախումբի ներկայացուցիչ զեկուցումին:

Հայաստանի Ազգային ժողովի 2. Յ. Գ. պատգամաւորական խմբակցութեան անդամներ յանախ կ'այցելեն Հայաստանի գանազան մարզեր եւ կը ծանօթանան անոնց բնակիչներուն հարցերուն: Վերջին այցելութիւնը տրուած է Գեղարքունիքի մարզ, որուն բնակչութեան հետ տեղի ունեցած հանդիպումներին ի յայտ եկած է, որ գոյութիւն ունին չլուծուած բազմաթիւ ընկերային հարցեր: Այս նիւթին մանրամասնութիւնները կարդալ «Երկիր»-ի 5րդ էջին վրայ:

7րդ էջին «Հարկային բարեփոխումները՝ օրակարգում» յոդուածով «Երկիր» կ'անդրադառնայ Հայաստանի անմխիթար հարկային համակարգին: Տրոյ էջով կը բացուի ընկերային հարցի մը բոլորակարգ «զբօսաշրջական» գրասենեակներու խոստումներուն պատճառով հարկաւոր արտագաղթող ընտանիքներու բշտուած վիճակի մէջ յայտնուիլը:

9րդ էջով «Երկիր» կ'անդրադառնայ Ռուբեն Ղազարեանի եւ Վանո Սիրադեղեանի յայտնաբերման աշխատանքներուն եւ այս անգամուան Հայաստանի ներքին գործոց նախարարութեան անտարբերութեան: 10րդ էջի «Անունը կայ, մամուլը չկայ» խորագրուած յոդուածը կը խօսի Հայաստան - Սփիւռք առաջին խորհրդածողովի որոշումով ստեղծուած Համահայկական Միջազգային Կեդրոնի աշխատանքներուն, անարդիւնաւետութեան եւ կը վերլուծէ այս հարցին պատճառները:

## Ս. ՆՃԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՅՈՅ

### ՍՐԲԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՕԾՈՒՄ

Կիրակի, 14 Ապրիլ 2002ին, յընթացս Ս. պատարագի, Ս. Նճան Մայր Եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի 4 մեծադիր սրբակարգներու օծում: Օծուող պիտի կատարէ՝

### ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

Առաջնորդ Լիբանանի Շայոց թեմին

Սրբակարգներուն բարերարներն են ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱՆՏՐԵ ԵՒ ՆԻՆԱ ԹԱՊՈՒՐԵԱՆ, ի յիշատակ իրենց գերդաստանի նմոյսեղալ հոգւոցն: Սրբակարգիչը՝ **ՅՈՎԱԿԻՄ ՍՐԿ. ԱԶԶԱՐԵԱՆ:**

Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալ ժողովուրդը՝ սոյն հոգեպարար առիթին:

Ս. ՆՃԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՅՈՅ  
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՄԱՀԱԶԴ

Տիկին Հերմին Սահակեան եւ զաւակները՝ Անիթա, Էմմա եւ Յակոբ

Տիկին Ռննէ Խուրի եւ զաւակունք

Տէր եւ տիկին Սեդրակ Պլոտան եւ զաւակունք

Տիար Յովհաննէս եւ օրդ. Մարի Սահակեան

Տէր եւ տիկին Յէտի Հէջըմ եւ զաւակունք

Տէր եւ տիկին Թոնի Գրիգի եւ զաւակունք

Տէր եւ տիկին Փիեռ Խուրի եւ զաւակունք

Տէր եւ տիկին Փոլ Խուրի եւ զաւակունք

Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, թեւորի եւ հարազատին՝

### ԳԵՈՐԳ ՍԱՀԱԿԵԱՆԻ

(Օճեալ՝ Պէյրուս, 1936ին)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 10 Ապրիլ 2002, առաւօտեան ժամը 8:30ին, «Ժեհեթաւի» հիւանդանոցին մէջ:

Զուգարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 11 Ապրիլ, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Հայաշէնի Ս. Յովհաննէս Կարապետ Եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:  
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Սիուֆի, «Սէյլեյ» քաղ, «Պուրոս Սայիտ» շէնք, Ա. յարկ, «Revue Du Liban»-ի կից, Ուրբաթ 12 եւ Շաբաթ 13 Ապրիլին:

## ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՏՆՁԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտ երէկ դիտել տուաւ, որ իսրայէլեան օդանաւերու կողմէ Լիբանանի օդային սահմանի եւ «Կապոյտ Գիծ»-ի խախտումները նորութիւն մը չեն եւ նախարարութիւնը հարաւ մէջ ՄԱԿի ներկայացուցչութեան եւ ՄԱԿի մէջ իր ներկայացուցչին միջոցով միջազգային կազմակերպութեան տեղեկութիւններ կը փոխանցէ այս գրգռիչ զարգեցրեալ մասին, որոնք հակառակ պետութիւններու եւ ՄԱԿի խոստումներուն չեն դադարած:

«Պիտի շարունակենք արծաթեւայս հարցը ցոյց տալու, որ Լիբանան կը յարգէ «Կապոյտ Գիծ»-ը, մինչ իսրայէլ կը խախտէ միջազգային որոշումները», ըսաւ ան:

Լիբանանի ուղղուած իսրայէլեան սպառնալիքներուն մասին՝ Համուտ ըսաւ, որ անոնք նորութիւն մը չեն եւ Լիբանան կառչած կը մնայ իր հողը մտնողութեամբ ազատագրելու եւ ՄԱԿի թիւ 425 որոշումի գործադրութիւնը մտնողացնելու պահանջին:

Նախարար Համուտ երէկ հեռաձայնեց իր թուրքացի, սէուտցի եւ սուրիացի պաշտօնակիցներ՝ Հապիպ Պրն Շահիա՝ Սէուտ Ֆայսալի եւ Ֆարուք Շարէհի: Իսկ Համուտի հեռաձայնեց եզրագծոյն արտաքին գործոց նախարար Ահմէտ Մահմուտ: Պատասխանութիւնները կեդրոնացան շրջանային զարգացումներուն վրայ:

### ԲԱՆԱԿԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Բանակի հրամանատարութիւնը յայտարարեց, որ իսրայէլեան օդանաւեր երէկ ժամը 10:45ին Լիբանանի օդային սահմանէն ներս թռչեցին:

### ԾԱԽՈՒ ԶԱՐԿԱԲԱԾԻՆ

● Չալքա «Relax» քաղ, «Սելինք» շէնք, Ա. յարկ, 180 քառ. մետր: Գին՝ 80,000 տոլար: Ըն. 03/325844 եւ 01/375115:

### ԾԱԽՈՒ ԾԵՆՔ

● Պուրճ Համուտ, Փոլիկարպոս չրջան, 200 քառ. մետր. երկարակամի, բնակելի կառոյց եւ գետնայարկ խանութներ, յարմար գին: Դիմել հեռ. 01-897599:

● Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ

Ըն. 01-268866 եւ 03-695399

մանէն ներս թափանցելով թռիչքներ կատարեցին հարաւ եւ Լեռնայլեան մասին վերել, ուղղուելով դէպի հիւսիս, իսկ բանակը Սայտայէն եւ Շուֆէն հակաօդային կրակ բացաւ անոնց վրայ: Իսրայէլեան օդանաւերը ժամը 11:00ին թռիչքներ կատարեցին Պէյրուսի վերել. անոնք Սայտայէն, արեւմտեան Պէյրուսի վերել, Երզրայէլի, Ռաշայի, արեւմտեան Պէյրուսի վերել եւ Արբուսի վերել ալ թռիչքներ կատարեցին:

### ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՑՈՒՄԻ ԶԱՐՑՅԵՐՈՒ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ նախագահեց ապապետականացումի հարցերու գերագոյն խորհուրդի ժողովին, որուն ներկայ գտնուեցան Էլեւուտփի, տնտեսութեան, արդարութեան եւ աշխատանքի նախարարներ Ֆուատ Սիւհիորա, Պատէլ Ֆլէյխան, Սամիր ժըրը եւ Ալի Քանաս, ինչպէս նաեւ խորհուրդի ընդհանուր քարտուղար Դապի Եուսէֆ:

Խորհուրդը որդեգրեց եւ կատարութեան փոխանցեց Ֆլէյխանի առաջարկը՝ ապապետականացումի Պէյրուսի նախահանգիստի հացահատիկի մթերանցները 25 տարուան յատուկ արտօնագիրի հիմամբ:

Հարիրի երէկ նաեւ ընդունեց հանրօգուտ աշխատանքներու նախարար Նաժիպ Միքաթին, երեսփոխան Սամի Խաթաբ, ընկերային հարցերու նախարար Ասատ Տիպալ եւ Ռումանիոյ պրօսաշրջութեան նախարար Տան Մարիի Ալպարնը:

### ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼՄԻԱԳՈՅՆ ՆՈՒԲԵՐ

VIDEOԻ ԿԱՍ ՇԻՒ ԿՐԱՅ  
VIDEO CLIPՆԵՐ  
ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ

Դիմել՝ ԱՐԱ ԶԵՔԵՏԱՆ ՎԱՍ.  
Ըն. 01 / 261696, 03 / 250518

### ԱԶԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԲՈՒԼԵՃ ՏԻԿՆԱՆՅ ՅԱՆՆԱՆՈՒՄՔ

Վամբարձան եւ Մայրերու Օրուան գոյգ առիթներով

### ԴԱՇՏԱԳԱՆԱՑՈՒԹԻՒՆ

- Այցելութիւն՝ Ռաֆայի եւ Կարտինի սրբատեղիները  
- Ճաշ՝ «Ղապաթ ալ Ուատի» ճաշարան

ՀԻՆԿՇԱԲԹԻ, 9 ՄԱՅԻՍ 2002  
Սեկունդ՝ առաւօտեան ժամը 8:00ին վարժարանէն:  
Վերադարձ՝ ժամը 5:00էն 6:00ի շուրջ վարժարանէն:

- Սակ՝ 25,000 Լ. ո.
- ՅՆ՝ 12 տարեկան փոքրերուն համար՝ 15,000 Լ. ո.

### ՄԱՆՈՒԿԵԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ՎԱՉԷ ԵՒ ԹԱՍԱՐ ՄԱՆՈՒԿԱՆ Համալսարանական Կրթաթոշակ 2002-2003 Տարեշրջան

1. Մանուկեան Բարեսիրական Հիմնարկութեան Վաչէ եւ Թամար Մանուկեան Համալսարանական Կրթաթոշակի յատկացումներու բաժանմունքը՝ 2002-2003 ուսումնական տարեշրջանին համար պիտի յատկացնէ որոշ թիւով կրթաթոշակներ նախկին եւ նոր արժանաւոր ուսանողներու եւ թեկնածուներու:
2. Հիմնարկութեան ծրագիրը կը վերաբերի միմիայն այն ուսանողներուն, որոնք համալսարանական լրիւ մակարդակ ունեցող ուսումնասիրական հաստատութիւն մը պիտի յաճախեն կանոնաւոր կերպով:
3. Թեկնածուները պարտին ունենալ ուսումնական բարձր մակարդակ եւ ընդունուած ըլլալ նուազագոյնը Sophomore դասարանը՝ ամերիկեան համալսարաններուն մէջ, կամ համապատասխան դասարան մը՝ այլ համալսարաններու պարագային:
4. Մանուկեան Համալսարանական կրթաթոշակ ստացող բոլոր նախկին ուսանողները, ինչպէս նաեւ նոր թեկնածուները պարտին ներկայացալ հիմնարկութեան գրասենեակը՝ 15 Ապրիլէն 20 Մայիս (բացի Շաբաթ օրերէն), կէսօրուան ժամը 12:00էն մինչեւ կէսօրը ետք ժամը 5:00, ստորեւ յիշուած հասցէին, ստանալու համար կրթաթոշակի դիմումագիրը:  
ՎԱՍԵՒ. ժէլ Էլ Տիպի հրապարակ, «Մալլահ» Սենթըր, 5րդ յարկ, հեռաձայն՝ 04-713532:

Նախաձեռնութեամբ «ԴԻՏԱԿ» ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՄՍԱԳԻՐԻ Կազմակերպութեամբ՝ ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ ՍԵՆԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆՆԵՐՈՒ

Բարձր հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ՝

### Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

### ՇԱՆԴԵԱՆ 85ԱՄԵԱԿԻՆ

Նուիրուած սփիւռքահայ հայատրոպ բանաստեղծ

### ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆԻ

ՇՆԴԵԱՆ 85ԱՄԵԱԿԻՆ  
ԵՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ 65ԱՄԵԱԿԻՆ ԱՌՈՒԹՈՎ

Այսօր՝ Ուրբաթ, 12 Ապրիլ 2002, երեկոյեան ժամը 8:30ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

ԸՐԱԿԵՐ

## «ԱՐԵԳ»Ը ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ԵՆԿԱՅԱՑՈՒՑ

### «ՀԱՆՏԱՐԻ ԱՆՏԱՐԱԿՆԵՐԸ» ԹԱՏԵՐԱԽԱՂԻՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԵԼՈՅԹԸ

Երեք ամսուան ժրջան աշխատանքէ ետք երէկ՝ Հինգշաբթի, 11 Ապրիլին Համազգայինի «Արեգ» մասնկապատանեկան թատերախումբը առաջին անգամ ըլլալով հանրակեան ներկայացուց իր նորագոյն թատերախումբը՝ «Հանճարի անճարակները»: Ելոյթը տեղի ունեցաւ երեկոյեան ժամը 8:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

Շուրջ մէկուկէս ժամ տեւողութեամբ «Արեգ»-ի 24 մանուկ եւ պատանի դերասանները բեմին վրայ ստեղծեցին հեքիաթներու աշխարհ մը, ուր նաեւ ներկայ է կերպարներուն «ճալը»՝ Յովհաննէս Թումանեանի վիզէն Ստեփանեանի գրած եւ բեմադրած «Հանճարի անճարակները» թատերախաղին ելոյթները կը շարունակուին այս շաբաթավերջին:

«Հանճարի անճարակները» թատերախաղին պիտի անդրադառնանք մեր վաղուան թիւով:

### ՎԱՌԵԼԱՆԻԹԵՐՈՒ ՆՈՐ ՍԱԿԱՑՈՅՑ

- Ուժանիւթի նախարարութիւնը երէկ հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ վառելանիւթերու սակերը բարձրացում արձանագրած են միջազգային շուկայէն ներս, ուստի, նախարար Մահմուտ Ապապետէլ Համուտ Պայտուէն երէկ ի գօրու դարձած որոշումով կը գործադրուի հետեւեալ սակացոյցը:
- 98 օրքան պենզինի թիթեղը՝ 21,400 Լ. ո.
- Առանց կապարի 95 օրքան պենզինի թիթեղը՝ 19,200 Լ. ո.
- Առանց կապարի 90 օրքան պենզինի թիթեղը՝ 19,000 Լ. ո.
- Քարիւղի թիթեղը՝ 7,600 Լ. ո.
- Մագուլի թիթեղը՝ 7,000 Լ. ո.
- Ֆիլի 0 Սլի քլորիթը՝ 158 տոլար

ՎԱՐԱՅ ԶԱՅՆ

Այսօր, կէսօրուան ժամը 1:00ին կընաց ունկնդրել յատուկ յայտագիր մը, նուիրուած՝

Սփիւռքահայ ծանօթ բանաստեղծ

### ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆԻՆ

(Ընդհակին կողմէ իր գործերուն ներկայացմամբ)

● Յայտագիրին կրկնութիւնը՝ կէսօրէ ետք ժամը 5:00ին:

### ՀԱՅՎԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ընդհանուր Ապահովութեան Ուժերու ընդհանուր տնօրէնութիւնը կը յայտարարէ, որ կազմակերպած է քննութիւն - մրցանք մը Բ. կարգի քննիչներու համար:

Թեկնածուները պետք է լրացնեն հետեւեալ պայմանները.

- Լիբանանցի՝ աւելի քան տասը տարիէ ի վեր:
- Դիմումի ներկայացման առեւ 28 տարիքը անցած պետք չէ ըլլայ, եւ հասակը՝ առնուազն 168 սմ.:
- Իր քաղաքացիական իրաւունքներն չէ զրկուած, մէկ ամիսէն աւելի բանտարկութեան պատիժ չէ ստացած եւ քրեական յանցանքի համար չէ դատապարտուած:
- Ունի թեքնիք Բ. պաշալօրէա, էլէթրոնիքի կամ համակարգիչներու ծրագրումի մասնագիտութիւն:
- Կատարած է պարզ գիտութեան ծառայութիւնը տեղակալներու 12րդ, 13րդ կամ 14րդ խմբակին, ենթասպաներու 25րդ, 26րդ, 27րդ խմբակին, կամ գիտութեան 54րդ, 55րդ եւ կամ 56րդ խմբակին հետ:

Դիմումները պետք է ներկայացնել անձամբ, շէն 29 Մայիս 2002, Ընդհանուր Ապահովութեան Ուժերու գլխաւոր կեդրոնատեղի, Պէյրուսի Արդարութեան պալատին դիմաց:

Յաւելալ մանրամասնութիւններու համար դիմել Շայկակաճ Երեսփոխանական Գրասենեակ, «Շաղոյեան» կեդրոն, Բ. յարկ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՅՈՅ  
ՀԱՄԱՆԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ - շէՆՈՍ

### ԱՆԹԵԼԻԱՍԻ ՄԱՅՐԱԿԱՆՔԻՆ ՄԵՁ

### ՊԱՂԵՍԻՆՅՐԻ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՂՈԹԷԻ ՕՐ

Կազմակերպութեամբ՝  
ՀԱՄԱՆԱՐԱՆԱԿԱՆ ԲՐԻՍՏՈՆԵԱՅ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ

Հովանաւորութեամբ՝

### Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՇԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Համաշխարհային Զրիստոնեայ Ուսանողներու Միութիւնը (WSCF) կազմակերպած է աղօթքի հաւաք մը, առ ի զօրակցութիւն պաղեստինցի ժողովուրդին:

Չեմբարկը կը հիւրընկալէ Շայտաւանայոց Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութիւնը (ՇԵՇՈՍ), Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Տեղի կ'ունենայ Կիրակի, 14 Ապրիլ 2002, կէսօրէ ետք ժամը 5:00ին:

Հրաւիրուած են մեր երիտասարդները՝ մասնակցի դառնալու աղօթքի հաւաքին:

# ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՅ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՏԵԱՆԸ ՎՃԻՌ ՊԻՏԻ ՏԱՅ ՕՃԱԼԱՆԻ ՀԱՐՅՈՎ

ԱՆԳԱՐԱ, 11 (ՌՈՅԹԸՐԸ)- Մարդկային իրաւանց Եւրոպական Ատենանին նախագահը Հինգշաբթի օր հաւանական նկատած է, որ ատենանը այս տարի վճիռ մը տայ քիւրտ ըմբոստ ղեկավար Ապտիլլա Օճալանի դիմումին մասին՝ իր դէմ արձակուած մահազմեռիին գծով:

Թրքական ատենան մը Օճալանի դէմ 1999ին մահա-վճիռ արձակած էր՝ ի խնդիր քրտական հայրենիքի մը քԱԿի արշաւը գլխաւորած ըլլալու յանցանքով:

Եւրոպական ատենանին նախագահը՝ Լուսիոս Վիլոնզալը, Անգարա իր այցելութեան ընթացքին յայտնած է, թէ որոշում մը հաւանական է ատենանին ամառնային դադարէն առաջ:

Օճալանի փաստաբանները Թուրքիան ամբաստանած են քիւրտ ղեկավարին իրաւունքները բռնաբարելու յանցանքով՝ սկսելով 1999ին Նայրոպիի մէջ մասնաշարժի ուժերու կողմէ անոր ձեռքաւարութեան:

Մարդկային իրաւանց Եւրոպական Ատենանը, որ Մթնաշաղկապի կը գտնուի, 2000ին ընդունած է Օճալանի դիմումը քննել, վճռելով, թէ իր գանդատները ընդունելի են մարդկային իրաւանց Եւրոպական համաձայնութեան քանի մը յօդուածներու հիմամբ, ներառեալ՝ կեանքի իրաւունքը եւ արդար դատավարութեան մը իրաւունքը:

Թուրքիա ստորագրած է վերոնշեալ համաձայնութիւնը, սակայն անիկա երբեք չէ վաւերացուցած զայն: Համաձայնութիւնը ապօրինի կը հռչակէ մահազմեռը:

## «ԷՄԵԼԱՍԹԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԸԼ» ԿԸՔՆԱԴԱՏԷ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

«Էմմըսթի Ինթըրնեշնըլ»-ի կողմէ հրատարակուած տեղեկագիր մը կը նշէ, որ գանդան երկիրներէ աւելի քան 150 պաշտօնատարներ, որոնք մարդկային իրաւունքներու խախտումներ կատարած կամ հրահանգած են իրենց երկիրներուն մէջ, ապահով ապաստան գտած են Միացեալ Նահանգներուն մէջ:

Տեղեկագիրը կը նշէ, որ անոնցմէ ոմանք մինչեւ իսկ ամերիկեան հպատակութիւն ստացած են: Տեղեկագիրը կու տար օրինակը եթովպիացի պաշտօնատարի մը, որ հպատակութիւն նտացաւ, հակառակ անոր որ ամերիկեան ատենան մը զայն դատապարտած էր եթովպիոյ մէջ բռնարարներ գործած ըլլալուն համար եւ պահանջած, որ 1,5 միլիոն տոլար հատուցում վճարէ գոհներուն:

«Էմմըսթի» կոչ ուղղեց ամերիկեան կառավարութեան, ձեռքաւարելու, արտաքսելու, կամ դատելու բռնարարներ գործող ու Միացեալ Նահանգներ ապաստանողները:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ԹՈՒՐՔԻԱ - ԻՐԱԲ ՏԻՉԸԼԻ ԱՌԵՏՈՒՐԸ՝ ԴԱԴՐԱԾ

ԱՆԳԱՐԱ, 11 (ՌՈՅԹԸՐԸ)- Անցեալին հիւսիսային Իրաքէն Թուրքիա փոխադրակառքերով տիպով բարգաւաճ առեւտուր մը վերոյի իջած է, յայտնած է Անգարայի մէջ իրաքցի բարձրաստիճան քիւրտ մը Հինգշաբթի օր:

Անցնող տարիներուն այդ առեւտուրին համար օգտագործուած է օրական շուրջ 500 փոխադրակառք:

Հակառակ Իրաքի դէմ ՄԱԿի հաստատած պատժամիջոցներուն, Թուրքիոյ արեւմտեան դաշնակիցները աչք գոցած են, նկատի ունենալով, որ առեւտուրը նիւթական շահ կ'ապահովէ Թուրքիոյ աղքատ հարաւարեւելեան շրջանին, ինչպէս նաեւ հիւսիսային Իրաքի երկրէն անջատուած շրջանի քիւրտներուն:

Այդ առեւտուրը նաեւ Պաղտատի համար շահաբեր եղած է:

Փոխադրակառքերու թուրք վարորդներ յայտնած են, թէ Հապուրի թրքական սահմանային կեդրոնին պաշտօնատարներու կողմէ պարտադրուած սահմանափակումներն ու տուրքերը առեւտուրը գործնական ըլլալէ դադարեցուցած են:

Սակայն սահմանին հսկող թուրք պաշտօնատար մը այլ բացատրութիւն տուած է, ըսելով, որ տիպով չկայ, «հետեւաբար մէկը չենք դրկեր»: Թուրքիոյ մէջ «Շէյ» եւ «Փեթրոլ Օֆիս»-ի նման մեծ ընկերութիւններ ճնշումներ բանեցուցած են կառավարութեան վրայ, որպէսզի դադարեցնէ առեւտուրը, որ, ըստ անոնց, համապօր է անարդար մրցակցութեան:

# ՀԱԿԱՌԱԿ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԿԱՄՔԻՆ ՈՃՐԱԴԱՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏԵԱՆԸ ՐԱՍԱՏՈՂ ԸՈՈՍԻ ԸԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ ՎԱԵՐԱՅՈՒԵՑԱՒ

Աշխարհի ամէնէն գարշելի ոճիւրները դատելու համար մնայուն ատենան մը ստեղծելու երազը երէկ իրականութիւն դարձաւ, ողջունուելով շատերու կողմէ իբրեւ մարդկային իրաւանց անկիւն ազարձային նուաճում, քննադատուելով սակայն Միացեալ Նահանգներու կողմէ:

ատենանը գործի լծուի գալ տարի, Լա Հէյի մէջ (Հոլանտա):

## ԵՒՐՈՊԱՅԻՔ ԿՈՂՁՈՒՆԵՆ

Եւրոպացի ղեկավարները երէկ յայտարարած են, թէ միջազգային միջազգային ստեղծուած մը, հակառակ աշխարհի ամէնէն ուժեղ երկիրներէն երեքին սաստիկ ընդդիմութեան, ՉԼԴ դարու մարդկային իրաւունքներուն համար անկիւնազարձ մըն է:

ՄԱԿի կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցած հանդիսութեան մը ընթացքին, 10 երկիրներ ՈՃՐԱԴԱՏ Միջազգային Ատենանը հաստատող Հռոմի համաձայնագիրը վաւերացուցած են, երկիրները թիւը 66ի հասցըրելով, այսինքն՝ համաձայնագիրը Յուլիոս Լին ի գորու դարձնելու համար անհրաժեշտ թիւէն 6 աւելի:

10 երկիրները՝ Պոսնիա, Պուլկարիա, Քամպուտիա, Քոնկո, Իրլանտա, Յորդանան, Մոնկոլիա, Նիժէր, Ռումանիա եւ Սլովակիա իրենց փաստաթուղթերը միտժամանակ գետեղած են, հետեւաբար 60րդ պետութիւնը դառնալու պատիւը միայն մէկ երկրի չէ գացած:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան, Հռոմէն սփռուած ուղղակի հաղորդումով՝ կոչ ուղղած է այլ երկիրներու, որ նոյնպէս վաւերացնեն համաձայնագիրը եւ փաստաթուղթերը յանձնեն ՄԱԿին:

Կը նախատեսուի, որ

մարզերուն մէջ տեղի ունեցած քննադատութեանց:

Իսրայէլ, Թուրքիա եւ Փաշտան նոյնպէս չեն վաւերացուցած համաձայնագիրը՝ ստեղծելու միջազգային ատենան մը, որ լիազօրութիւն պիտի ունենայ քննութիւն բանալու եւ դատական հետապնդումներու ենթարկելու պատերազմական ոճիւրներ, հաւաքական սպանութիւններ, բռնաբարումներ եւ մարդկային իրաւանց այլ բռնաբարումներ:

Մինչ այդ, եւրոպական իր դաշնակիցներուն հարուածով մը, Մ. Նահանգներու նախագահ Ճորձ Պուշի վարչակարգը պատերազմական ոճիւրներու միջազգային մնայուն ատենանի մը ամբողջ գաղափարը մերժած է:

Ե. Միութիւնը ատենանի ետին կանգնող գլխաւոր մղիչ ուժն է եւ անոր բոլոր անդամները, բացի Յունաստանէն, վաւերացուցած են համաձայնագիրը:

Ատենան ընդդիմացող ամերիկացիներ կ'ըսեն, թէ անիկա ամերիկացի զինուորներ եւ քաղաքային պաշտօնատարներ ենթակայ պիտի դարձնէ իրենց երկրին իրաւական պաշտպանութեան ղուրս դատական հետապնդումի ենթարկուելու վտանգին:

(ՌՈՅԹԸՐԸ)

# ԹԱԼԵՊԱՆ ԵՒ «ՔԱՅԻՏԱ»Ի ԹԱՔՍՏՈՑՆԵՐ ԿԸ ԽՈՒՉԱՐԿՈՒԻՆ

Միջազգային խաղաղարար եւ աֆղան ուժեր Գապուլի մէջ թայպաններու եւ «Քայիտա» ցանցի անդամներու թաքստոցներ խուզարկած են, ձեռքաւարելով ըմբոստներ, որոնց շուրջ կան կասկածներ, թէ մարտաքաղաքին վրայ հրթիռներ արձակած են: Անոնք նաեւ չինական 151 հրթիռներ եւ այլ զէնքեր գրաւած են:

Ներքին գործոց նախարարութեան ապահովութեան պատասխանատու գորավար Տին Մոհամէտ Ճուրաթ յայտնած է, թէ կային այլ ձեռքաւարութիւններ՝ կասկածելիներու, փոխանցման հանգրուանի ղեկավար Համիտ Քարգայի եւ նախկին թագաւոր Ջահիր Շահի ահաբեկչութեան համար դաւի մը հարցով:

Խուզարկութիւնները մաս կը կազմէին անցնող շաբթուան ընթացքին ծայր տուած վարազութեանց վերջ տալու ճիգերուն: Ի միջի այլոց պաշտպանութեան նախարար Մոհամէտ Ֆահիմի դէմ մահափորձ մը, խաղաղարար ուժերու վրայ հրթիռային յարձակում մը եւ ընկերային ծառայողներու վրայ յարձակում մը տեղի ունեցած են:

Միւս կողմէ, Բրիտանիոյ պաշտպանութեան նախարար Ճէֆ Հուն երէկ յայտնած է, թէ Բրիտանիա Քապուլի մէջ միջազգային խաղաղարար ուժերու հրամանատարութիւնը Թուրքիոյ կրնայ յանձնել Յունիսի վերջերուն, այսինքն՝ ծրագրուած թուականէն 2 ամիս ետք:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ԳԵՐՄԱՆԻԱ ՁԷՆՔԻ ԱՄՊԱՐԿՕ ՁԷ ՀԱՍՏԱՏԱԾ ԻՍՐԱՅԷԼԻ ԴԷՄ

ԼՈՆՏՈՆ, 11 (ՌՈՅԹԸՐԸ)- Գերմանիոյ պաշտպանութեան նախարար Ռուտտլիֆ Շարփինկ Հինգշաբթի օր յայտնած է, թէ Իսրայէլի զինուորական սարքերու յանձնումին ուշացման որոշումը ամպարկօ մը չէ, այլ Միջին Արեւելքի տագնապին երկու կողմերուն նշան մը, թէ պէտք է դադրին իրարու դէմ կռիւ մղելէ:

Լոնտոնի մէջ մամլոյ ասուլիսի մը ընթացքին, յետաձգումին մասին հարցապնդուելով, Շարփինկ յայտնած է, թէ «բացարձակապէս անհրաժեշտ է կեդրոնանալ պաղեստինեան ահաբեկչութեան աւարտին եւ իսրայէլացիներուն կողմէ զինուորական գերհակազդեցութեան աւարտին վրայ»:

Իսրայէլին պաշտպանութեան նախարարութիւնը այս շաբաթասկիզբին յայտնած էր, թէ Գերմանիա ուշացուցած է իր «Մերքաւա» տիպի հրասայլերուն համար անհրաժեշտ կարելոր մասերու յանձնումը: Այդ հրասայլերը կ'օգտագործուին Այսրորդանանի քաղաքներու մէջ պաղեստինցիներուն դէմ գործողութիւններու ընթացքին:

Իսրայէլի պաշտպանութեան նախարարութեան մէկ բանբերը յայտնած էր, թէ նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատարներ կապուած են արտաքին գործոց եւ պաշտպանութեան նախարարութեանց եւ վարչապետերու գրասենեակներու հետ՝ ուշացումին գծով:

Գերմանիա Մ. Նահանգներու, Եւրոպական Միութեան, Ռուսիոյ եւ ՄԱԿի կողմէ միացեալ քայլերու կոչ ուղղած է՝ Միջին Արեւելքի տագնապին վերջ տալու համար:

## ՉԵՉԵՆՈՅ ԸԱՐՅՈՎ

## ՌՈՒՍԻԱ՝ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԹԻՐԱԽ

Եւրոպիայի Գերմանիայի Զորքազարքի օր Ռուսիան ամբաստանած է Չեչենիոյ մէջ տեղի ունեցող մարդկային իրաւանց բռնաբարումներուն շուրջ անհրաժեշտ ձեռքով քննութիւն չտանելու յանցանքով: Անիկա կոչ ուղղած է Մոսկուայի, որ թափ տայ նման բռնաբարումներով ամբաստանալներու դատաւարութեան:

Խորհրդարանը Վորալի կանգնած է բանաձեւի մը, որ Չեչենիոյ մէջ անմիջական պիտի դուրս կ'ուղղէ, ինչպէս նաեւ անիկա կը պահանջէ երկու կողմերէն, որ քաղաքական լուծում մը գտնեն հարցին:

«Ընդունելով հանդերձ, որ Ռուսիա շինիչ կարգ մը միջոցառումներու դիմած է Չեչենիոյ մէջ՝ քննութիւն տանելու համար մարդկային իրաւանց բռնաբարումներու շուրջ, խորհրդարանը կը ցաւի, որ շատ մեծ բաց մը կը մնայ գանգաւորներ թիւին եւ դատական հետապնդումներու թիւին միջեւ», ըսած է Խորհրդարանը:

(ՌՈՅԹԸՐԸ)



ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ԻՆՉՈ՞Ւ ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ԻՐ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ ԴԷՄ ԵՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՆԱՉՄԱՆ

Այնքա՛ն գրուած եւ խօսուած է Հայկական Յեղասպանութեան մասին: Աշխարհի մեծերը եւ նուազ մեծերը, իմաստունները եւ բանգէտները կը շարունակեն խաղալ բառերու ստուգաբանութեան լարերը: Ինչո՞ւ թող ջեղասպանութիւն, ջարդ, ողբերգութիւն, տեղահանութիւն, պատերազմական ոճիւր, մարդկութեան դէմ ոճիւր: Ցանկը չի յաւակնիր ամբողջական ըլլալ: Մենք ալ անձնատուր ենք յաճախ այս խաղին:

Եթէ ի՞ դարուն սկիզբը Յեղասպանութեան հարցը կը վերաբերէր հայերու եւ թուրքերու, այսօր ան կ'ընդգրկէ ոչ միայն Հայաստանը եւ թուրքիան, այլ նաեւ՝ միջազգային համայնքը, որ քաղաքական համաշխարհայնացման ընթացքին մէջ մտած է, եւ անոր իրականացման համար մանր մանր հարկ է հարթել: Չափազանցած չենք ըլլալ, եթէ խորհինք, որ տնտեսական-քաղաքական համաշխարհայնացման պատճառով անարիւն Յեղասպանութիւնը կը սպառնայ բազմաթիւ ազգերու եւ մշակոյթներու, անոնց, որոնք անպաշտպան են, վիրավոր են բազմաթիւ տկարութիւններով, բայց նաեւ՝ անոնց, որոնք այսօր կը թուի թէ ապահով են, բայց տասը, քսան, յիսուն տարիէն կրնան վտանգուիլ, պիտի վտանգուին, եւ մեծ իմաստութեան կարիք չկայ հասկնալու համար: Թուրքիա չ'անդրադառնաւ, որ ինք եւս ենթակայ է նոյն սպառնալիքին:

Բայց ինչո՞ւ թուրքիա եւ իր պաշտպանները դէմ են Յեղասպանութեան ճանաչման: Նոյն պատճառներով, որոնց համար Յեղասպանութիւն գործուած էր: Համաշխարհայնացումը կը ձգտի սահմաններու վերազանք, հետեւաբար նաեւ՝ ազգային հարեմբքներու անհետացման: Այս նպատակին իրականացման ճանապարհին ինչո՞ւ խանգարուիլ սահմանային սրբազրուութեան կամ քարտէսներու վերանայման խնդիրներով: Այս խաղին մէջ ընդգրկուելով՝ թուրքիա եւ յուսար եւ դեռ կը յուսայ համաթրքական նոր կայսրութիւն մը ստեղծել: Խորհրդային Միութեան փլուզման յաջորդող տարիներուն թրքախօս երկիրները իր հովանիին տակ համախմբուելու ճիգերը չար ղեկավարութեան, որովհետեւ այդ թրքախօս երկիրները նախանձանդորէն ուղեցին պահել իրենց ինքնութիւնը եւ անկախութիւնը: Հովանաւորի եւ երէց եղբոր դերը ձախողած է, բայց թուրքիա չէ յուսահատուած: Կը ձգտի շրջան վերադառնալ գործակիցի տարաբան: Ամերիկայի իր կրնար հասկցած ըլլալ այս կացութիւնը, սակայն նախապահ-դրամատիրական իր մեծ ընկերութիւններուն անմիջական շահերը կը թելադրեն աչք գոցել թրքական փառասիրութիւններուն ի տես, առանց խորհելու, որ նոր ձեւի թուրք ազգայնականութեան մը ծնունդը եւ զարգացումը շատ աւելի վտանգաւոր կրնան ըլլալ, քան՝ թախապաններու թնձուկը:

Այս տուեալներով, այս մեծ խաղերուն մէջ, Հայկական Յեղասպանութեան ճանաչումը արգելք է, ոչ թէ անոր համար ան բարոյական նշանակութիւն ունի, այլ՝ անոր քաղաքական հետեւանքներուն համար, քանի որ ան պիտի բարդուի քրտական հարցին եւ սուրիական պահանջներուն վրայ: Թուրքիա եւ Միացեալ Նահանգները, տարբեր շահերէ թելադրուած, դէմ են Յեղասպանութեան ճանաչման, իսկ Իսրայէլ անմիջական հաշիւներ նկատի ունենալով՝ քայլ կը պահէ ինքզինքը եւ պատմութիւնը դրժելով: Ինչ կը վերաբերի Արեւմուտքին, ան կը շարունակէ մէկ քայլ առաջ մէկ քայլ ետի քառալիք իր դաւանած սկզբունքներուն, պատմական ճշմարտութիւններուն Ամերիկայի հետեւորդի իր դերը խաղալով:

Թուրքիա եւ իր պաշտպանները դէմ են Յեղասպանութեան ճանաչման, քանի որ այդ կ'ենթադրէ սահմաններու վերանստեղծութիւն, ինչ որ, ըստ իրենց, կը նշանակէ շրջանի ապակայունացում, հետեւաբար՝ առեւտուրի խանգարում: Ապրիլ 24ը նախորդող այս օրերուն առնուազն մեզի համար կացութիւնը յստակ պէտք է ըլլայ: Կարիք կ'ա՞յ յիշեցնելու, որ «Հայ-թրքական Հաշտութեան Յանձնաժողովի» ստեղծումը մաս կը կազմէր հայկական հարցը թաղելու դաւին, որուն մեղսակից եղան նաեւ հայեր, եւ դեռ կ'ըսեն, թէ այդ յանձնաժողովը բոլորովին չէ թաղուած: Ներագրագային մեր հակազդեցութիւնը բաւարար ուժգնութիւն չունեցաւ չէզոքացնելու համար հայկական անձնատուութիւնը, եւ եթէ ան կրկին հրապարակ գայ նոր նեղուկներով եւ խոստումներով, հայ հանրային կարծիքը կրնայ շփոթի մատուցել: Զինաթափ պէտք չէ ըլլալ եւ պարզ է, որ սպառնալիքի ենթակայ ենք: Թիրախ ենք: Նպատակներն ալ որոշ են:

Թէ թուրքիա եւ իր պաշտպանները մինչեւ ե՞րբ կրնան շարունակել անտեսման-ուրացման այս քաղաքականութիւնը, պատասխանը պիտի տան հայոց պետութիւնը, զանգուածները եւ աշխարհացրել հայերը: Աւելի քան երբեք զէնքը վար դնելու ժամանակը չէ, նոյնիսկ եթէ Հայաստան եւ հայութիւն այսօր կամ վաղը զանազան ռապլ խոստումներէ պիտի չօգտուին:

3. ՊԱՆԵԱՆ

ՀԱՄԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ  
HAMPIG SASSOUNIAN  
CSP - L.A.C. B - 5 - 131.44750  
60-TH ST. WEST LANCASTER,  
CA, 93536 — USA

«ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ»Ի ՀԱՅ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Հայ-թրքական Հաշտութեան Յանձնաժողով»ի հայ անդամները՝ ՀՀՄԻ ցարգաբեկ եւ Հայաստանի արտաքին գործընդհանուր նախարար Ալեքսանտր Արզումանեան, ռուսահրապտակ քաղաքագետ Անդրանիկ Միհրանեան, Սուրիոյ մէջ Հայաստանի նախկին դեսպան Դաւիթ Յովհաննիսեան եւ Ամերիկայի Հայկական Համագործակցութեան տնօրէն Վան Գրիգորեան անցեալ երկուշաբթի երեւանի մէջ ունեցած են հանդիպում մը, որուն քննարկումներուն մասին տեղեկութիւններ չհրապարակուեցան:

Ըստ «Ազատութիւն» կայանին, հակառակ անոր որ յանձնաժողովին աշխատանքը ստանձնած է անցեալ Դեկտեմբերէն ի վեր: Սակայն կողմերը պահպանած են անպաշտօն հարդորակցութիւնները: Յանձնաժողովին հայ անդամները իրենց աշխատանքները կ'ստեղծուցան են, երբ քրքակալ կողմը մերժած էր միջազգային մարմինի մը կողմէ Հայկական Յեղասպանութեան մասին քննարկում մը կատարելու առաջարկը:

ԺԱՄԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՅ - ԹՐԷԱԿԱՆ ԵՐԿԻՍՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՍԱԹԵՔՍՈՒՄ

«Հայ - թրքական Հաշտութեան յանձնաժողով»ի աշխատանքները վերստին կ'ստանան շարունակական զգուշացում: Թուրքիայի նախարար Անդրանիկ Միհրանեանի կողմից կրկին շրջանառութեան մէջ է դրուում նախորդ իշխանութիւններին օրօք արդէն մէկ անգամ փորձարկուած այն գաղափարը, համաձայն որի՝ հայ-թրքական յարաբերութիւնները շուտապէս կ'արձակուին հարցում թրքական եւ հայկական կողմերու միջև շահագրգռութեան տարբեր աստիճաններ:

«Թրքական կողմը կարող է սպասել ինչքան հարկաւոր է, եթէ չլինի հզօր ճնշում համաշխարհային հանրութեան կողմից: Բայց մենք չենք կարող մեզ թոյլ տալ սպասել», պնդում է քաղաքագետ իր եզրակացութիւնը համեմելով օտար երկրներում ապրող հայերի եւ հայաստանաբնակներին դիրքորոշումները: Թուրքիայի ղեկավարները կարող են հայաստանաբնակներին արտաքին գործընդհանուր իր շահերը իր հարկաւոր է, եթէ չլինի հզօր ճնշում համաշխարհային հանրութեան կողմից: Բայց մենք չենք կարող մեզ թոյլ տալ սպասել», պնդում է քաղաքագետ իր եզրակացութիւնը համեմելով օտար երկրներում ապրող հայերի եւ հայաստանաբնակներին դիրքորոշումները: Թուրքիայի ղեկավարները կարող են հայաստանաբնակներին արտաքին գործընդհանուր իր շահերը իր հարկաւոր է, եթէ չլինի հզօր ճնշում համաշխարհային հանրութեան կողմից: Բայց մենք չենք կարող մեզ թոյլ տալ սպասել», պնդում է քաղաքագետ իր եզրակացութիւնը համեմելով օտար երկրներում ապրող հայերի եւ հայաստանաբնակներին դիրքորոշումները:

Դրան գումարուեց անցած տարուանից խորացող անտեսական ճգնաժամը, որը լիակատար արտաքին գործընդհանուր իր շահերը իր հարկաւոր է, եթէ չլինի հզօր ճնշում համաշխարհային հանրութեան կողմից: Բայց մենք չենք կարող մեզ թոյլ տալ սպասել», պնդում է քաղաքագետ իր եզրակացութիւնը համեմելով օտար երկրներում ապրող հայերի եւ հայաստանաբնակներին դիրքորոշումները: Թուրքիայի ղեկավարները կարող են հայաստանաբնակներին արտաքին գործընդհանուր իր շահերը իր հարկաւոր է, եթէ չլինի հզօր ճնշում համաշխարհային հանրութեան կողմից: Բայց մենք չենք կարող մեզ թոյլ տալ սպասել», պնդում է քաղաքագետ իր եզրակացութիւնը համեմելով օտար երկրներում ապրող հայերի եւ հայաստանաբնակներին դիրքորոշումները:

Սկզբից եւէթ նկատենք, որ իր հարցազրուման միակ «եթէ»ն Անդրանիկ Միհրանեանը համարում է համաշխարհային հանրութեան հզօր ճնշման հաւանականութիւնը՝ մոտանալով կամ չցանկանալով խոստովանել որ այդ զէպքում ժամանակի գործօնը թուրքիայի օգտին աշխատելու մասին եզրայնացում կորցնում է իր իմաստն ու նշանակութիւնը, քանզի մենք չէ, որ որոշում ենք այն պահէ, երբ համաշխարհային հանրութիւնը հզօր ճնշում կը գործադրի թուրքիայի վրայ: Աւելի քան 10ամեայ ժամանակաշրջանը, երբ թուրքիա իր շահերը իր հարկաւոր է, եթէ չլինի հզօր ճնշում համաշխարհային հանրութեան կողմից: Բայց մենք չենք կարող մեզ թոյլ տալ սպասել», պնդում է քաղաքագետ իր եզրակացութիւնը համեմելով օտար երկրներում ապրող հայերի եւ հայաստանաբնակներին դիրքորոշումները:

3. ՊԱՆԵԱՆ

ԳԵՈՐԳ ԽՈՒԳԻՆԵԱՆԻ «Հայոց Աշխարհ»

ԹՐԷԱԿԱՆ ՍԱՍՈՒԼ «ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊՆԴՈՒՄԸ ՀՈԳԵԿԱՆ ՀԻՒԱՆԴԻ ՊՆԴՈՒՄ Է»

Պոլսոյ «Մարմարա» օրաթերթէն առնուած եւ ստորեւ տրուած յօդուածը կ'անդրադառնայ Հայկական Ուսումնասիրութիւններու Ընդհանուր Մարմինի Ընդհանուր Մարմինի «Ճումուրիյէթ» թերթի հարցազրոյցին:

17 Մարտին կատարուած այս հարցազրոյցը կարելի լուսարձակի տակ կ'առնէ հակառակ հեղինակաւոր սման հիմնարկի մը նախագահին կեցածըները՝ հայ-թրքական կնճիռն մասին ընդհանրապէս եւ Հայկական Յեղասպանութեան մասին յատկապէս:

«Ճումուրիյէթ»ի աշխատակից Լէյլա Թաւաշուզլու, որ ամէն կիրակի հարցազրոյց մը ունի, իր երէկուան հարցազրոյցը վերապահած էր թուրքերոյ մէջ նոր հաստատուած Հայկական Ուսումնասիրութիւններու Հիմնարկի նախագահ Էօմէր Լիւթէմի: Հիմնարկը վերջերս հիմնուած էր հայկական հարցերու շուրջ բովանդակալից եւ անկողմնակալ ուսումնասիրութիւններու պատրաստութեան համար եւ արդէն սկսած էր հրատարակել պարբերաթիւթ մը: Բայց պարբերաթիւթին մէջ գրողները եւ նոյնիքն Էօմէր Լիւթէմ բաւական խիստ կեցուածք ունին հայերու նկատմամբ: Այս խիստ կեցուածքը շատ ուշագրաւ էր Լէյլա Թաւաշուզլուի հետ կատարուած հարցազրոյցին մէջ: Լէյլա Թաւաշուզլու, որ անցեալ կիրակի նմանօրինակ հարցազրոյց մը ունեցած էր շուէտացի երեսփոխան Փէր Կերթնիի հետ (վերջինը լայնօրէն արձագանգ հանդիսացած էր հայոց պնդումներուն նկատմամբ անոր հայանպաստ կարծիքներուն), այս կիրակի խիստ հարցումներով մտեցաւ Հայկական Յեղասպանութեան հարցին: Լէյլա Թաւաշուզլու հարցազրոյցին մուտքին դիտել տուաւ, որ Հայկական Յեղասպանութիւնը, որ թուրքերոյ գլխուն կաթիլներու փորձանքներուն մէջ մասն է, հոտած «քեմիսիսի փիլաւի» նման շարունակ կը տաքցուի ու սեղան կը դրուի: Ասիկա, որուն հոտը հեռուէն իսկ սիրտ խառնուք կը պատճառէ, վերջին տասնհինգ օրուան ընթացքին շուէտացի երեսփոխան Փէր Կերթնիի անկեղծագիրով կրկին գրուեցաւ մեր ճաշասեղանին վրայ: Դիտել տալէ ետք, որ շուէտացի երեսփոխանը ոստիկանական վէպեր ստեղծելու սիրահար մըն է, կը գրէ. «Ահա թէ ինչո՞ւ այս անգամ ուղեցինք այս հարցին շուրջ տեսակցել Էօմէր Լիւթէմի հետ, որ մէկն էր Թաւաշուզլուի հայրնիկ սպանութեան նուիրուած համադրամարին կազմակերպիչներէն:

Ըստ Էօմէր Լիւթէմի, Հայկական Յեղասպանութեան պնդումները հիւանդագին հոգիի արտայայտութիւններ են: Լէյլա Թաւաշուզլու հարց կու տայ, թէ ինչո՞ւ յոյնն ալ Յեղասպանութեան պնդում չունին, միայն հայերը ունին: Էօմէր Լիւթէմի պատասխանը կապ ունի Սփիւռքի ձուլման վտանգին հետ: Ըստ իրեն, Սփիւռքը կը վախնայ ձուլուելէ, եւ եթէ չըլլայ հասարակաց թշնամի մը դէմ դիրք ճշդելու հրամայականը, աշխարհի բոլոր հայերը շուտով պիտի կորսնցնեն իրենց ինքնութիւնը: Էօմէր Լիւթէմի ասոր իրեն փաստ կ'ընդունի այն պնդումը, թէ Հայաստանի մէջ հայերը շատ ալ կարեւորութիւն չեն տար Յեղասպանութեան հարցին: Հետաքրքրական կէտը այն է, թէ սփիւռքահայերը ատելութեան մասին չէ, որ կը խօսին, կը խօսին պատմական արդարութեան մը մասին, մինչդեռ պատմութեան մէջ զէպքերը կը պատահին, զանազան համաձայնութիւններով լուծուած մը կը կապուին եւ անկէ ետք ամէն բան կը վերջանայ:

Կէտ տեսնել, որ գործանալի կը թուի Էօմէր Լիւթէմի, հետեւեալն է. իր կարծիքով, թուրքերու դէմ մեծագոյն ատելութիւնը զգալու էին առաջին սերունդի հայերը, որոնք անձամբ ապրած էին պատերազմին ողբերգութիւնը եւ ապրած էին անոր ցաւատանջ կողմերը: Երկրորդ սերունդն ալ թուրքերու որոշ վերապահութիւններ կրնար ունենալ, բայց երրորդ եւ չորրորդ սերունդները, այսինքն այսօրուան սերունդները կ'արանին խոստովանելու: Պարզապէս կ'ըսեն, որ ատելութիւն մը կայ, որովհետեւ խորունկ վէրքեր բացուած են: «Ի՞նչ վէրքեր»: Եթէ ինծի հարցուի, աստեղ յերիւրածոյ վէրքեր են: Տեսէք, երրորդ սերունդի անդամներն են, որոնք սպաննեցին թուրք դիւանագէտները: Հասկնալի է, որ արիւն կարգ մը շրջանակներու համար շահու աղբիւր մըն է: Այդ շրջանակները կը կեղեքեն Սփիւռքի հայերը: Այս ալ ըսեմ, որ եթէ Ամերիկայի մէջ հայ հաւաքականութիւնը իր ինքնութիւնը կորսնցնէ, առաքելական եկեղեցական ալ պիտի չմնայ, այն ատեն պիտի ստիպուին չլմխածին երթալ: Բնաւ կ'երթա՞ն: Ո՛չ մէկը կ'ելլէ ու Ամերիկայի պայմանները ձգելով Հայաստան կ'երթայ:

ԳԵՈՐԳ ԽՈՒԳԻՆԵԱՆԻ «Հայոց Աշխարհ»





«ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ...»

Շարունակում է 5րդ էջը

Լեյլա Թառնազյանը կը լինեցնէ, թէ վերջերս հիմնադրուած էր «Հայ-Թրքական հարաբերական յանձնաժողով»-ը, որուն մէջ կային ոչ հայաստանցի հայեր: Արդեօք ինչո՞ւ ոչ հայաստանցի հայեր ալ հրահրուած էին մաս կազմելու այդ յանձնախումբին: Լիւթէմի պատասխանը հետեւեալն է. «Ասիական յերիւրածոյ բան մըն էր, որ պէտք է այն տպաւորութիւնը ունենանք, թէ հայերը համայն հայ ժողովուրդը կը ներկայացնեն: Գալով Հայաստանի հայերուն անոնք սփիւռ-քահայերուն չեն նմանիր: Կարելի չէ ըսել, որ թուրքի բարեկամ են, բայց անոնք առաւելաբար խորասուզած են իրենց առօրեայ կեանքին մէջ, եւ որովհետեւ դժմ յանդիման չեն մնացած Ցեղասպանութեան գրականութեան մը հետ, անոնք նուազ ժխտական զգացումներ ունին թուրքիոյ եւ թուրքերու նկատմամբ»:

Իսկ ի՞նչ կը մտածէ հայկական ահաբեկչական արարքներուն մասին: Էօմէր Լիւթէմ կը լինեցնէ, թէ առաջին արարքը կատարուեցաւ 1973ին, երանիքան անունով մէկու մը կողմէ, բայց ասիական հաստական ձեռնարկ մըն էր: Այդ ձեռնարկը օրինակելի դարձաւ հայկական ահաբեկչական կազմակերպութիւններուն համար, որոնք մտածեցին, որ ահաբեկչութիւնը լաւ միջոց մըն էր իրենց դատին քարոզչութեան համար: Բազմաթիւ երկիրներ զօրակցեցան հայ ահաբեկիչներուն, որովհետեւ անոնք ունէին հայկական ուժեղ լոպիներ: Միայն Յունաստանի եւ հարաւային Կիպրոսի մէջ է, որ Հայկական ուժեղ լոպի չկայ, բայց այս երկուքն ալ հայերու զօրակցելու պատճառներ ունէին իրենց հարցերուն պատճառով:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԴԱՄԱՍԿՈՍ ՆԵՐՍԷՍ ԶԱԶԱՐԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱՄԱԶԱՍՊ ԳԱՅԱՊԱԼԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Ժուհիէի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԱՏԹԵՈՍ ՆԻՒՐԲԵԹԼԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Հալէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻ ԱՆՎԱՐ ԳԱՍԵՆԹԱՅՔ ԱԶԳ. ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՅԻԱ ԶԱԿՈՒԲԵԱՆ ՔՈՒԼԷՃ Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան ջուրհաններու հաստատուած համակարգիչի անգլադարձուցումը, Գալուստ Կիւլպենկեան Համակարգիչի կեդրոնէն ներս, կը սկսի Երկուշաբթի, 15 Ապրիլ 2002ին:

ԱՐՄԵՆՈՒՆԻ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Նոր Սիւսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐՄԵՆՈՒՆԻ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Ժուհիէի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՎԻՔՈՐԻԱ ԹԻԹԻՉԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով,

հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարի մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱՄԱԶԱՍՊ ԳԱՅԱՊԱԼԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Ժուհիէի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԻՀՐԱՆ ՇԻՇԵՃԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Նոր Սարաջի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՂԱԶԱՐՈՍ ԲԵՉԵՃԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Նոր Սարաջի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԶԱՐՈՒՆԻ ԳԱՐԱԳԱՇԵԱՆԻ մահուան քառասունքին եւ ՍԻՐԱՐՓԻ ԿԻՐԱԿԻՆԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Նոր Ատանա թաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐՄԵՆ ԷԾՄԵՋԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Նոր Ատանա թաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

«ԱԶԴԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ «ԱԶԴԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Name and Amount. Includes entries like Սուրիական թղթուկի, Իրաքեան տինար, Պահրէյնեան տինար, etc.

Table with 2 columns: Name and Amount. Includes entries like Անգլիական մէկ ոսկի, Իրանեան մէկ ոսկի, Օսմանեան մէկ ոսկի, etc.

Table with 2 columns: Name and Amount. Includes entries like ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ ԳԻՈՒ Ա. ճշդում ԳԻՈՒ Բ. ճշդում

ԼՈՆՏՈՆԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Name and Amount. Includes entries like Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը, Եւրո, Ֆրանսական ֆրանք, etc.

Advertisement for ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻ ԱՆՎԱՐ ԳԱՍԵՆԹԱՅՔ ԱԶԳ. ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՅԻԱ ԶԱԿՈՒԲԵԱՆ ՔՈՒԼԷՃ. Includes details about the program and contact information.

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆



☆ ԽՈՑ (21 Մարտին 20 Ապրիլ) Եթէ «խեղճութիւն» մը ընելու փափաք ունիք այսօր, դուք ձեզի մի՛ արգիլէք, ըրէք, եւ ձեզի միացուցէք բարեկամ մը կամ բարեկամուհի մը: ☆ ՃՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս) Այսօր պիտի կարենաք ձեզմէ հեռացնել բոլոր տեսակի թակարդները, արգելքները, որովհետեւ կարող պիտի ըլլաք դիմադրելու նոյնիսկ դժուար աշխատանքներու եւ նոր որոշումներու: ☆ ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս) Պտոյտ մը կամ երեկոյց մը կազմակերպեցէք ձեր սիրած անձին կամ բարեկամներու հետ՝ հեռու մնալու համար օրուան տաղուկէն: Ծատ պետք ունիք նման հանգիստի կամ «փախուստի»: ☆ ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս) Աշխատանքի մարզը պիտի ըլլայ ձեռնուտ, պիտի կարենաք նոր կարգադրութիւններով հարցերը լուծել, ու ասիկա շնորհիւ ձեր իմաստուն որոշումին: ☆ ԱՌԻՒԾ (24 Յուլիսին 23 Օգոստոս) Ձեր ջանքերուն պտուղը պիտի բաղդէ այսօր: Ուսանող ըլլաք թէ գործատի, բախտը պիտի ժպտի ձեզի այսօր: Մնացեք նոյն տրամադրութեամբ: ☆ ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր) Պիտի կարենաք խուսափի ծախս մը, գոր ստիպողական կը նկատուի: Բայց ասիկա պատճառ մը թող չըլլայ ձեր խնայած դրամը ուրիշ բանի մը յատկացնելու կամ մտխոյզելու: ☆ ԿԵՒԻՔ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր) Տրամադիր էք այսօր հանոյք պատճառելու ամէնուն: Բայց մի՛ մոռնաք մտածելու նաեւ ձեր մասին՝ գուարք մթնոլորտ մը ստեղծելու ձեր շուրջը: ☆ ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր) Լաւ վիճակի մէջ էք, փայլուն տրամադրութեամբ եւ փափաքը ունիք նոյն պատեմ բազմատեսակ գործեր կատարելու: Սակայն այդ գործերուն մէջէն կարելորդներուն տուէք նախախորհիւնը՝ եւ ապա միւսներուն կարգը կու գայ: ☆ ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր) Անձ մը, որուն անկեղծութեան ապահով էք, իր սիրտը պիտի բանայ ձեզի եւ պիտի յայտնէ իր սերը: Նախքան զինք մերժելը՝ լաւ մտածեցէք: ☆ ԱՅԾԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար) Երկար ատենէ ի վեր բարեկամութիւն մը ստեղծած էք անձի մը հետ. այսօր նոր ու խորունկ կապ մը ձեզ պիտի միացնէ իրարու եւ միասնաբար պիտի իրագործէք նոր որոշումներ: ☆ ՄՈՎԱՆՈՑ (21 Յունուարին 19 Փետրուար) Յաջողութեամբ լեցուն է օրը, պիտի գնահատուիք ձեր մեծերէն, եթէ ուսանող էք ձեր ուսուցիչներէն, եթէ աշխատուոր կամ պաշտօնեայ էք՝ ձեր սնօրեկէն կամ վարպետէն: ☆ ՉՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ) Եթէ մեկու մը դրամ փոխ տուած էք, այսօր առիթը պիտի ունենաք վերստանալու ձեր տուած գումարը: Ասիկա պիտի նկատուի յաջողութիւն:

Advertisement for Panasonic featuring a TV and speakers. Includes the text 'ՕՐԱՏԵՏՐ' and 'ՀԵՌԱՏԵՍԻԼ'. It lists various programs and times for the 'ԱԶԴԱԿ' radio station, such as 'ՄԱՏԹԵՈՍ' at 7:00, 'ՄԱՐԿԱԿԱՆ' at 21:30, etc.

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5122

Advertisement for 'ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5122' featuring a grid of numbers and text. Includes the name 'Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱԶԱՐԵԱՆ' and lists of numbers for various programs.

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Բ Ն



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ

## ՍԱԺԷՍ ԵՒ ՍԱՖԱ ԴՈՒՐՍ ՄՆԱՅԻՆ

Լիբանանի ֆուտբոլի բաժանի մրցաշարին 1/16րդ հանգրուանի մրցումներուն, Նըթմէի հետ ախոյեանութեան տիտղոսին համար պայքարող Սաժէս, երէկ 4-0 արդիւնքով ծանր պարտութիւն մը կրելէ ետք Պըրժէն, դուրս մնաց մրցաշարէն:

Դուրս մնացողներուն շարքին էր նաեւ Սաֆա, որ 3-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Ախա Ահլի Ալէյէն:

Մեծագոյն արդիւնքը սակայն արձանագրեց Ահտ, որ 10-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց Նահտա Պար Էլիսար:

Հ.Մ.Մ. եւս յաղթանակ մը արձանագրեց, 4-2 արդիւնքով պարտութեան մատնելով Գ. դասակարգին մաս կազմող Ռիսալէ Պէյրութը:

Նըթմէ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Ահի-րամ Հանաուէին, իսկ ժառուատ Թրիփոլի՝ Ռիսաու Ուալ Ատայը (3-1):

ՅՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## ԱՅՍՕՐ՝ ՄԱՐՍԷՅ - ՓԱՐԻԶ ՍԵՆ ՃԵՐՄԵՆ

Յրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան 2001-2002 եղանակին աւարտին մնացած է երեք հանգըրուան միայն եւ պայքարը բաւական սուր ձեւով կ'ընթանայ մասնաւորապէս վերջին շարքներուն, պարագլուխի դիրքը գրաւող Լանսի եւ անոր անմիջական մրցակիցին՝ Լիոն-Մարսէյ, նկատելի ընդհանրացումով, որ անոնց միջեւ երկու կէտի չնչին տարբերութիւն մը կայ:

32րդ հանգրուանի բացման մրցումին, այսօր տեղի պիտի ունենայ Մարսէյ - Փարիզ Սէն Ճերմէն մրցումը, առաջինը դաշտին՝ «Վելոտրոմ»-ի մէջ:

Մնացեալ երեք մրցումներուն Մարսէյ կորսնցնելիք կամ շահելիք ոչինչ ունի, որովհետեւ ինչ որ այլ ըլլան այդ մրցումներուն արդիւնքները, անկախ վստահ է, որ 2002-2003 եղանակին մաս պիտի կազմէ Ա. դասակարգին:

Սակայն Մարսէյի համար, Փարիզ Սէն Ճերմէնի դէմ տեղի ունենալիք մրցումը, ինչպէս միշտ, ախոյեանութեան տիտղոսին համար ճակատում մըն է: Անոնցմէ որեւէ մէկը պիտի չընտրէ այս մրցումին պարտութիւն:

կրել: Սակայն մայրաքաղաքի կազմը յաւելնելով պատճառով ունի երեք կէտ խելու դաշտին տէրերէն, որովհետեւ ախոյեանութեան տիրանալու շատ չնչին յոյս մը ունի:

Մարսէյ դաշտ պիտի ներկայանայ ամբողջական կազմով, մինչ Փ. Ս. Ճէն պիտի բացակային՝ ժերմէն Լըրուա (կիսա-կայուն), Լորան Լըրուա, Հրէկո Լէալ եւ Ալոնթինո (վիրաւոր):

Վաղը տեղի ունենալիք մրցումներուն, Լանս Հիւրը պիտի ըլլայ Պասթիայի ժերմէն մրցումը, առաջինը դաշտին՝ «Վելոտրոմ»-ի մէջ:

Պասթիա, որ պիտի

փորձէ յաղթանակ մը արձանագրել, ոչ թէ Լիոնի բարիք մը ընելու համար, այլ վտանգաւոր գոտիէն աւելիով հեռանալու համար:

Լիոնի կատարելիք մրցումը համեմատաբար աւելի հանգիստ ճակատում մը պիտի ըլլայ, մասնաւորապէս որ անիկա այս եղանակին ցարդ իր դաշտին վրայ պարտութիւն չէ կրած: Սակայն անոր կազմէն պիտի բացակային Բրիսթոֆ Տելմո, պարզիցի Էտմիլիոն եւ Փիեռ Լէկը (վիրաւոր):

Հետաքրքրական այլ հանդիպումներ կը կարծելիք ըլլալ նաեւ Օքսէն - Սոչո եւ Լիլ - Մոնպէր մրցումները:

Ստորեւ՝ 32րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (փակագիրին մէջ նշուած են ժամերը՝ Պէյրութի ժամանակացոյցով): Նշենք, թէ Օքսէն յետաձգուած մրցում մը ունի կատարելիք Սրտանի դէմ):

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Մարսէյ - Փարիզ Ս. Ճ.	21:45ից
ՎԱՂԸ	
Օքսէն - Սոչո	18:15ից
Պասթիա - Լանս	21:00ից
Կէնկան - Պորտո	21:00ից
Լիլ - Մոնպէր	21:00ից
Լիոն - Մոնփելիէ	21:00ից
Մէս - Ռէն	21:00ից
Նանց - Լորիան	21:00ից
Սըտան - Թրուա	21:00ից

ԱՐԵՎՄԵՆԱՆ ԱՍԻՈՅ ՄՐՅԱՇԱՐՔ

## ԼԻԲԱՆԱՆ ՇԱՀԵՑԱԻ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՈՍԿԻ ՄԵՏԱԸ



Ժան - Զլոտ Ռապպաթ (կեդրոնը), Մուսա (աջից) եւ Միքայիլ

Քուէյթի մէջ տեղի ունեցող Արեւմտեան Ասիոյ 2րդ մրցաշարին, Լիբանան յաջողեցաւ շահիլ իր առաջին ոսկի մետալը, շնորհիւ Ժան - Քլոտ Ռապպաթի, որ բարձրութիւն ցատկերու մէջ յաջողեցաւ գերազանցել իր մրցակիցները, արձանագրելով 2,10 մեթր արդիւնք մը: Արծաթ մետալին տիրացաւ Ամր Մուսա (Մէնտաական Արարիկ), որ արձանագրեց 2,07 մ. արդիւնք մը, իսկ պրոնզ մետալին՝ Մալքմ Սիար (Քուէյթի), որ նոյն արդիւնքը արձանագրեց:

Ստորեւ՝ մետալներուն դասաւորումը:	Ոսկի	Արծ.	Պրոնզ
Քուէյթ	22	20	13
Իրան	7	8	11
Սեուտ Արաբիա	7	4	7
Սուրիա	6	9	15
Քաթար	4	5	6
Յորդանան	1	1	5
Լիբանան	1	1	1
Ա. Մ. Էմիր.	-	1	3
Պահրէյն	-	-	1
Օման	-	-	-
Պաղեստին	-	-	-
Եմէն	-	-	-

ՊԱՍՏԵԹՊՈԼ

## ԱՒԱՐՏԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՄՐՅՈՒՄԸ ԿԸ ՍԿՍԻ ՎԱՂԸ

Լիբանանի պասթեթօլի ֆեդերատիւնը քննելէ ետք անցեալ երեքշաբթի օր Ռիատի դաշտին վրայ տեղի ունեցած Ռիատի - Եանվիլի մրցումին անուշուրիւն ունեցող կարգ մը հարցերը եւ լսելէ ետք օրուան միջապային իրաւարարներուն պեկուցումը եւ իր կողմէ նշանակուած ներկայացուցիչին տեղեկագիրը, որոնք երկուքն ալ մրցումով կախակալել Եանվիլի մարզիչ Ֆուատ Ապու Շարան եւ խումբին ամերիկացի մարզիչ Թոնի Մետիսընը, որոնք մրցումին ամերիկացի հաշիւով էին օրուան իրաւարարներուն:

Ֆեդերատիւնը նաեւ յատուկ կարգադրութիւններ կատարեց Ռիատի եւ Եանվիլի միջեւ տեղի ունենալիք ամերիկացի մրցումին վերաբերեալ: Այն խումբը, որ մրցումը կը կատարէ իր դաշտին վրայ, անոր պիտի վերապահուի տոմսակներուն 90 տ հարիւրը, իսկ հիւր խումբին՝ 10 տ հարիւրը: Այսինքն՝ Ղապիլի դաշտին վրայ տեղի ունենալիք մրցումին ներկայ պիտի գտնուին Սաժէսի 2250 համակիր, իսկ Ռիատի՝ 250 համակիր:

Իսկ Ռիատիի դաշտին վրայ տեղի ունենալիք մրցումին, հիւրընկալ կապին համակիրները պիտի ըլլան 900, իսկ Սաժէսի համակիրները՝ 100:

Ստորեւ՝ երրորդ դիրքի մրցումին եւ ամերիկացի հանգրուանի մրցումին յայտագիրը:	ԺԱՄ	ԴԱՇՏ
Սաժէս - Ռիատի	20:45ից	Ղապիլ
Կիւրպի, 14 ԱՊՐԻԼ		
Եանվիլի - Անիպալ	16:00ից	Սանթրալ
Երվանուպի, 15 ԱՊՐԻԼ		
Ռիատի - Սաժէս	20:45ից	Ռիատի
Երեւան, 16 ԱՊՐԻԼ		
Անիպալ - Եանվիլի	18:00ից	Չախլէ
ՉՈՐԵՎԱՐԱՐՈՒ, 17 ԱՊՐԻԼ		
Սաժէս - Ռիատի	20:45ից	Ղապիլ
Էրեւան, 18 ԱՊՐԻԼ		
Եանվիլի - Անիպալ	18:00ից	Սանթրալ
Ռիատի, 19 ԱՊՐԻԼ		
Ռիատի - Սաժէս	21:30ից	Ռիատի
Կիւրպի, 21 ԱՊՐԻԼ		
Սաժէս - Ռիատի	20:45ից	Ղապիլ

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

## ՓԷՅԱՐԶ ԿԸ ՓՈՐՁԷ ՓԼԷՅՈՑԻ ՏՈՄՍ ՄԸ ԱՊԱՀՈՎԵԼ

ԷՆ. ՊԻ. ԷՅ. իր երէկուան մրցումներուն, Կեդրոնական գոտիի (Արեւելեան շրջան) Յրդ դիրքը գրաւող Ինտիանա Փէյսըրը 98-82 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Թորոնթո Ռեփորթը, իր յոյսերը պահեց փլէյօֆի մրցումներուն տոմս մը պահուցելու համար: Իր կազմին արձանագրած այս յաղթանակին մէջ իր կարեւոր բաժինը ունեցաւ Ճերմէն Օնիլ, որ նշանակեց 29 կէտ:

Ուաշինկթըն Ուեյրթմըն իր դաշտին վրայ յաղթեցաւ 90-77 արդիւնքով պարտութեան մատնել իրմէ մէկ դիրք մաւելի վեր գտնուող Ֆիլատելֆիա Սիքսըրըը (Արեւելեան շրջան, Ատլանտեան գոտի): Այս յաղթանակէն ետք այժմ Ռեփորթը ունի որոշ յոյս մը, փլէյօֆի մրցումներուն համար: Սիքսըրը մարզիկ էրիք Միո նշանակեց 26 կէտ, իսկ Ուեյրթմընի մարզիկ էթըն Թոմսը՝ 14 կէտ եւ 15 ռիպուան:

Եարլի Էմիլի, Հոուսթինգ 101-95 արդիւնքով պարտութեան մը կրեց Աթլանթիկ Շոքէյն: Յաղթանակն կազմին մարզիկներէն Շարիֆ Ապտիլի Ռահիմ նշանակեց 33 կէտ, իսկ Տերմար Ճոնսըն՝ 21 կէտ:

Մաքրամենթո Քինկը երկու կէտի տարբերութեամբ (118-116) յաղթական վերադարձաւ Կոլորադոյ Սթըյթ Ուորիորզի դաշտէն: Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, այժմ Քինկը միայն մէկ յաղթանակի պէտք ունի հանդիսանալու համար ինդիանական գոտիի (Արեւմտեան շրջան) ախոյեան: Անոր մարզիկներէն Քրիս Ուեյրթմընը նշանակեց 31 կէտ: Պասթիլի մէջ, Սելիթըս 70-65 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Մայնի Նիքթը: Սելիթըսի մարզիկներէն մարզիկ Անթոնիո Բարթըլէմէոն նշանակեց 21 կէտ:

Թիքսի մարզիկ Անթոնիո Ուեյրթմընը նշանակեց 21 կէտ, իսկ անոր խմբակից Փոլ Փիրսը՝ 15 կէտ: Իսկ Հիթի մարզիկներէն՝ Ալոնթո Մոնիսիկ եւ Էտի Ճոնս՝ 16ական կէտ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները: Ուաշինկթըն Ուեյրթմընը Սիքսըրը 90-77

Աթլանթիկ Շոքէյն - Եարլի Էմիլի 101-95  
Քիլիկեմսթր Քալիֆորնիա - Սիլուոքի Պարս 106-81  
Տիքսո Պուլս - Տիքսո Փիքսը 102-101  
Պոսթըն Սելիթըս - Մայնի Նիքթը 70-65  
Ինտիանա Փէյսըրը 98-82  
Սան Անթոնիո Սպըր - Տեյլըր Նիքթը 87-79  
Մաքրամենթո Քինկը - Կոլորադո Սթըյթ Ուորիորզ 118-116

ԼՈՂԱՐԵԱՒ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՂՈՐԴՆԵՐԸ ԲԱՐԵԼԱԻԵՅԻՆ ԻՐԵՆՅ ԱՐԴԻՆԵՐԸ

Մոսկուայի մէջ աւարտած աշխարհի կարճ լողաշաւի ախոյեանութեան մրցումներուն, թէեւ հայրենի երեք լողորդները՝ Վահէ Գարրիէլեան, Տիմիթրի Մարգարեան եւ Միքայիլ Բորոյեան բաւական հեռու մնացին պատուաբեր դիրքերէ, սակայն անոնք յաջողեցան բաւական լաւ արդիւնքներ արձանագրել եւ բարելաւել Հայաստանի մրցանիշները: Մասնաւորաբար 100 մեթր զգալի մրցումներուն, Տիմիթրի Մարգարեան Հայաստանի համար հաստատեց նոր մրցանիշ մը, արձանագրելով 53" 75 արդիւնք մը եւ այսպիսով բարելաւեց 14 տարի առաջ հաստատուած մրցանիշը: Անոնք նաեւ կարողացան 50, 100, 200 եւ 400 մեթրի մրցումներուն հինգ տարբեր առիթներով բարելաւել Հայաստանի մրցանիշները:

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.

## ԻՏԱԼԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԽՈՒՄԵՐՆ ԱԼ ԴՈՒՐՍ ՄՆԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐՔԷՆ

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.ի ֆուտբոլի մրցաշարին կիսա-ամերիկացի հանգրուանի դարձի երէկուան երկու ճակատումները իտալական երկու խումբերուն՝ Ա. Սէ. Միլանի եւ Ինթեր Միլանի համար եղան բաւական անբախտ, որովհետեւ անոնք, որոնք նախապէս այն ակնկալութիւնը ունէին, որ ամերիկացի ճակատումը կրնար ըլլալ վոլտ իտալական, դուրս մնացին մրցաշարէն:

Ինթեր Միլան, որ երթին 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրած էր իր դաշտին վրայ, 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Ֆլյենտուրա Ռոթերտամի հետ: Փիեռ Վան Հոյտոնք (16րդ) եւ Եոն Տալ Թոմասըն (34րդ) նշանակեցին Ֆլյենտուրայի կողմը, իսկ Քրիսթիանո Զանթթի (84րդ) եւ Մոհամէտ Քալոն (90րդ)՝ փենալթիով) Ինթերի կողմը:

Ա. Սէ. Միլան հակառակ անոր որ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Պորուսիա Տորթոնը, սակայն դուրս մնաց, որովհետեւ երթին 4-0 արդիւնքով պարտութիւն մը կրած էր: Ֆիլիպո Ինցալի (11րդ), Քոսմիլո Բոնիթա (19րդ) եւ Սերահիո (89րդ)՝ փենալթիով) նշանակեցին իտալական կապին կողմը, իսկ Լարս Ռիքըն՝ Տորթոնուտի կողմը (93րդ): Ամերիկացի մրցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Մայիս 8ին, Ֆլյենտուրայի մէջ:

ԹԵՆԻՍ

## Դ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՅ ՖԵՐԵՐՈՆ

Լիւպոնի մէջ (Փորթուգալ) տեղի ունեցող թենիսի «Էսթրիլ» տղոց մրցաշարի մէջ, Բ. հանգրուանին իր կատարած արձանագրեցին նաեւ 3րդ դասուած սպանացի Քարլոս Մոյա եւ Տոմիտիէ Վալտիս:

Մ. հանգրուանին, Նալպանտեան պարտութեան մատնած էր այլ սպանացի մը՝ Յրանչիսթո Քլաւէթը, 6-3 եւ 6-3 արդիւնքով: Բ. հանգրուանին յաղթանակներ արձանագրեցին նաեւ 3րդ դասուած սպանացի Քարլոս Մոյա եւ Տոմիտիէ Վալտիս:

Մ. հանգրուանին, Նալպանտեան պարտութեան մատնած էր այլ սպանացի մը՝ Յրանչիսթո Քլաւէթը, 6-3 եւ 6-3 արդիւնքով: Բ. հանգրուանին յաղթանակներ արձանագրեցին նաեւ 3րդ դասուած սպանացի Քարլոս Մոյա եւ Տոմիտիէ Վալտիս:

## ՀԱՊԻ ԺՈՂՈՎ՝ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ...

Հայաստանի Ալգալին Անվտանգութեան հորհուրդի ընդհանուր քարտուղար, պաշտպանութեան նախագահ Սերժ Սարգսեան, որ կը գլխավորէ ՀԱՊի նշեալ ժողովին մասնակցող հայկական պատուիրակութիւնը, երէկ հանդիպում ունեցաւ ղապալի իր պաշտօնակիցին՝ պոր. Մուխամար Ալտինպայելի հետ: Բնակարանային հարցերու վերաբերեալ հարցազրուակի ընթացքին հայկական կողմէն անհրաժեշտ էր ՀԱՊի ծիրէն ներս բազմակողմանի գործակցութեան պարագային հետախուսելը:

## ՌՈՒՍԱԿԱՆ ԽԱՐԻՍԽԸ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ...

Հակակշիռ չկայ, աւելցուցած է Վրաստանի պաշտպանութեան նախարարը: Վրացի նախարարը հերքած է այն տարածայնութիւնները, թէ Միացեալ Նահանգներ մերժած են զինուորական փորձագէտներ ուղարկել Վրաստան, վրացական բանակի հակահարցեկրական բաժանմունքը մարզելու համար: «Վրաստան եւ Միացեալ Նահանգներ զինուորական կապեր կը զարգացնեն 2001էն ի վեր, Վրաստան - Միացեալ Նահանգներ - Թուրքիա աշխատանքային եռեակի ծիրէն ներս», ըսած է Դեկատեմ:

# ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԸՐԶ ԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԻՆ ՍԱՆՁԱՐՁԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ...

Շարունակում Ա. Էջեմ

Լորենը մեծ քանակությամբ զենք բռնագրաված են: Ականատեսները իրենց կարգին յայտնեցին, որ զինուորները Պիր Ջէյթ համալսարանի գիշերօթիկ բաժնի ուսանողները զինքով դուրս հանած ու խուզարկութիւններ կատարած են: Բանակը ձեռնարկած է նաև ուսանողներ ուսուցողներին դուրսը թողնելու հաստատած քաղաքին վրայ:

Իսրայէլեան ապահովութեան աղբիւրները հարգեցին, որ զինուորները նոր յարձակում մը գործեցին թուրքարմի վրայ, ուրկէ հեռացած էին քանի մը օր առաջ, եւ ձեռնարկեցին կին մը, զոր ամբաստանեցին անձնասպանական գործողութիւն մը ծրագրելու յանցանքով:

Կազալի պաղեստինեան ապահովութեան ուժերու պատասխանա-

վրայ որեւէ արժէք չի ներկայացնել իսրայէլի քայլը, որ աչքի փոշի ցանելու համար է: Ան բաւ նաեւ, որ իսրայէլեան ուժերը տակաւին գրաւուած կը պահեն Նապլուսը, Ռամալան, Ժենինը եւ Բեթ-ղեհէմը, ուր տակաւին չէ լուծուած պաշարուած եկեղեցիին տաճարը:

Պաղեստինեան իշխանութիւնը հրապարակեց յայտարարութիւն մը միջազգային ընտանիքէն պահանջելով, որ դէտեր ուղարկէ՝ դադրեցնելու համար պաղեստինցի ժողովուրդին դէմ գործողութիւնը «նացիական սպանդները»:

Իսրայէլի արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէս երէկ ըսաւ, որ իսրայէլեան ուժերը երեք շաբթուան մէջ կրնան հեռանալ պաղեստինեան շրջաններէն, աւարտելէ ետք իրենց առաքելութիւնը: Սակայն Փերէս



Օգտուելով քանի մը ժամուան արտոնութենէն՝ պաղեստինցի կիներ Արաֆատի գորակազմէն ցոյց կը կատարեն Ռամալլայի մէջ:

տուն՝ Մոհամէտ Տահլան ըսաւ, որ քանի մը գիւղերէ հեռանալով, իսրայէլ ամբողջ Այսր յորանանը պարպած չ'ըլլար: Տահլան աւելցուց, որ գետնի

աւելցուց, որ կառավարութիւնը պատրաստ է լսելու Փաուրի թելադրանքը պաղեստինեան շրջանները պարպելու ժամանակացոյցի մը մասին:

## «ԱՄԲՈՂՁ ԿԵԱՆՔԻՍ ՏԵՌՈՂՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱԾ ԵՄ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ...»

Շարունակում 4րդ էջէն

ի՞նչ կ'ըսէ գրակնութեան մէջ արդիակնութիւնը եւ նորարարութիւնը:

Ժ. Յ.- Նոր անուններ կը յայտնուին, բայց կարեւորը հետեւողականութիւնն է:

Ինծի համար բանաստեղծութիւն մը կամ գրական էջ մը բան մը պէտք է ըսէ, պատգամ ունենայ, հաղորդական ըլլայ: Ասիկա ընելու համար պէտք է յստակ ըլլայ: Պոզոն առաքել ըսած է. «Եթէ խօսքը բոլորին կողմէ հասկնալի պիտի չըլլայ, թող չխօսին»: Եթէ խօսքը պիտի չհասկնուի, ընթերցողին հոգին եւ միտքը պիտի չզարգանայ, զգացում եւ գաղափար պիտի չփոխանան, անոր ապրումներուն թարգմանը պիտի չհասկնանայ, ի՞նչ իմաստ կ'ունենայ: Ժամանակին հեղինակ մը ինծի զրկած էր բանաստեղծութեան գիրք մը, որ սակայն ինծի համար անհասկնալի էր: Իրեն պատասխանեցի էջին վրայ տող մը հոս, տող մը հոն, տող մը ետեւը գրելով: Նորարար բանաստեղծին պատասխանեցի նոր ոճով. թող փորձէ հասկնալ: Անըմբռնելին եւ անհասկնալին գիտ չեն շահագրգռեր եւ գեղարուեստական վայելք չեն տար:

«Ա.»- Կը նախընտրէ՞ք, որ գեղարուեստական ստեղծագործութիւնը մնայ դասականի սահմաններուն մէջ:

Ժ. Յ.- Ո՛չ: Պայման է, որ կարենամ գրական գործին հետ հաղորդուիլ: Պէտք է հետո խօսի եւ ես անոր արձագանգեմ:

Դժբխտաբար ժամանակակից գրականութենէն շատ չեմ կարողացած: Երբեմն նոր բանաստեղծութիւններ կը կարդամ, կը կարդամ, սակայն բան չեմ հասկնար:

Նոր բանաստեղծներէն շատեր կ'ուզեն ամէն զնով նորարարութիւն ընել, ավանկարտ ըլլալ: Աստիճաբար են միայն: Իւրաքանչիւր ինքնատիպ բանաստեղծ նորարար է: Անպայման հայհոյակեր, սրիկայագիր կամ ճանելուկագիր ըլլալու չէ, որպէսզի նորարարութիւն ըլլայ:

Սակայն արուեստի գործերուն մեծագոյն քննադատը ան է, ժամանակը:

«Ա.»- Այսօր, երբ ձեր մագրուին իջած է «ձիւնեղէն մոխիրը», ի՞նչպէս կ'ընթացայ ձեր ստեղծագործական կշռոյթը: Կեանքը կը շարունակէ՞ ներքնէն ձեզ:

Ժ. Յ.- Հարիւր տոկոսով: Կեանքը մեր ներսիդին



Թուրքիոյ հոգեւոր պետերը երէկ Պոլսոյ մէջ կայացած մամուլի միացեալ ասուլիսի մը ընթացքին պահանջեցին դադրեցնել պաղեստինցի զինուորի տարածումը արևմտահայաստանի մէջ: Չախէճ չորրորդը՝ Կոստանդնուպոլսոյ հայոց պատրիարք Մ. արք. Մուրաֆեան:

«Էն. Պի. Սի.» կայանէն սփռուած հարցազրոյցի մը ընթացքին, Փերէս ըսաւ, որ իսրայէլ կ'ուզէ ընդառաջել անյապաղ քաշուելու ամբողջական պահանջին, սակայն բանակը տակաւին չէ աւարտած իր գործը: Փերէսի գնահատումով զինուորական գործողութիւնը տակաւին քանի մը շաբթուան կը կարօտի աւարտած յայտարարելու համար:

Փերէս յայտնեց, որ իր կառավարութիւնը կը գիտակցի, թէ Այսր յորանանի դէմ զինուորական գործողութիւնը՝ արտասահմանի մէջ վնասներ պատճառած է իսրայէլի, բայցեւայնպէս հրէական պետութիւնը այլ ընտրանք մը չունէր հակադարձելու համար պաղեստինեան անձնասպանական գործողութիւններուն:

Իսրայէլ յայտարարած է, որ խուզարկութիւններու ընթացքին գտնուած փաստաթուղթեր կը հաստատեն, թէ Եսաէր Արա-

ֆաթ պատասխանատու է իսրայէլացիներուն դէմ կատարուած անձնասպանական գործողութիւններուն մէջ մասին: Պաղեստինցիները անընդունելի կը նկատեն այս ամբաստանութիւնը:

### ՓԱՈՒՔԸ - ՇԱՐՈՆ ԸՆԴՈՒՊՈՒՄԸ՝ ԱՅՍՕՐ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուրը այսօր Երուսաղէմի մէջ հանդիպում պիտի ունենայ Շարոնի հետ, լուծում մը գտնելու համար տազնապին:

Իսրայէլ ուղղուելէ առաջ, Փաուրը Սպանիայէն հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունենացաւ Շարոնի հետ: Փաուրը ըսաւ, որ Շարոնի հետ քննարկած է հարցեր, որոնց կարգին է Արաֆատի հետ տեսակցութեան պարագան: Խօսելով իր առաքելութեան մասին, Փաուրը ըսաւ, որ

հարաւ է, որ այս առաքելութիւնը իրեն վստահուած է, իրրեւ ներկայացուցիչը իր կառավարութեան: Փաուրը յայտնեց նաեւ, որ Շարոն իրեն փոխանցած է, թէ 22 դեղերէ քաշուած է իսրայէլեան բանակը:

Փաուրըի առաքելութիւնը կը վայելէ գորակընտանիքին: Ան Չորեքշաբթի օր Մատրիտի մէջ հանդիպում ունեցած էր քառանդամ յանձնախումբին ներկայացուցիչներուն հետ, որոնց կարգին էին ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանը, Ե. Միութեան ներկայացուցիչներ եւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովը: Բոլորն ալ յայտարարեցին, որ զօրավիզ կը կանգնին Փաուրըի առաքելութեան:

Սպանիոյ վարչապետ Խոսէ Մարիա Ասնարը ըսաւ, որ Փաուրըի միջինարեւելեան առաքելութիւնը խաղաղութեան միակ յոյսն է: Ասնար յոյս յայտնեց, որ Շարոն պիտի չարգիլէ Փաուրըի հանդիպումը Եսաէր Արաֆատի հետ: Ասնար ակնցուց, որ իսրայէլի եւ Միացեալ Նահանգներու միջեւ սուր տագնապ մը ծայր պիտի տայ, եթէ Փաուրը - Արաֆատ հանդիպումը արգիլուի: Ան պահանջեց նաեւ, որ իսրայէլ վերջ տայ գրաւման, իսկ պաղեստինեան իշխանութիւնը ալ պատասխանատուութեան բաժին մը ստանան:

Մատրիտի քառակողմանի յանձնախումբին խաղաղարար ճիգերուն գրակցութիւն յայտնեց նաեւ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը, որուն կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը կը յայտնէր, թէ միջազգային ընտանիք ամբողջական գորակցութիւն կը յայտնէ Մատրիտի մէջ հրապարակուած կեցեալներին, որ իսրայէլէն կը պահանջէ հեռանալ պաղեստինեան քաղաքներէն, ինչպէս նաեւ Արաֆատին ալ կը պահանջէ սանձել «ահաբեկչութիւնը»:

ՄԱԿի մէջ պաղեստինցի դէտ Նասրի Քիտուա ըսաւ, որ Ապահովութեան Խորհուրդին քայլը կարեւոր էր, որովհետեւ քառանդամ յանձնախումբին յայտարարութիւնը ամբողջական է ու կ'ընդգրկէ բոլոր հարցերը եւ տազնապին բոլոր երեսները: Քիտուա դիտել տուաւ, որ Ապահովութեան Խորհուրդի բանաձեւերէն շատ աւելի ազդու կը նկատուի անիկա:

ՄԱԿի մէջ արաբական երկիրներու համամարումը ընդառաջած էր ամերիկեան պահանջին, որ կը մերժէր Ապահովութեան Խորհուրդին ներկայացուցիչը բանաձեւ մը: Ուստի ինչպէս սպասուած էր վերջին երկուստեք բանաձեւը, եթէ անիկա թուարկութեան դրուի: Արաբական երկիրներու բանաձեւը կ'առաջարկէր, որ երկրորդ «կողմ» մը ներկայութիւն զառնայ Միջին Արեւելքի մէջ: Քիտուա ըսաւ, որ արաբական երկիրները պիտի չհրաժարին բանաձեւէն եւ զան պիտեստին պիտի հետապնդեն, եթէ բարելաւում չարձանագրուի Միջին Արեւելքի մէջ:

### ՕԹԱՆԻ ԽԱՂԱՂԱՐԱՐ ՈՒԹԻ ԾՐԱԳԻՐ ԳՎԱՅ

ՕԹԱՆԻ ընդհանուր քարտուղար Ճորճ Ռոպորթսըն յայտնեց, որ ՕԹԱՆ չի քննարկել Միջին Արեւելքի տազնապին մէջ խաղաղարար դերակատարութեան մը ծրագրերը: Ռոպորթսըն աւելցուց, որ խաղաղութեան



Իսրայէլացի զինուոր մը իր գնդապետը կ'ուղղէ անգէն պաղեստինցիներու վրայ:

հսկող ուժ ուղարկելու նախապայմանը տուեալ չըլլանին մէջ խաղաղութիւն ունենալն է, որ տակաւին առկայ չէ Միջին Արեւելքի մէջ:

Ռոպորթսըն ըսաւ, որ ՕԹԱՆ կրնայ քննարկել դէտերու պաշտպանութեան ծրագիր մը, որուն նմանը հաստատած է պալէստիններուն մէջ:

### ԹՈՒՆՈՒԻ ՄԷՋ ՊԱՅՅՈՒՄ՝ ԴՐԱԿԱՆ ԱՂՈՅԱՎԱՅՐԻ ՄԸ ՍՕՏ

Կազ փոխադրող բեռնակառք մը պայթեցաւ Թունուզի հարաւային ձերպա կղզիին մէջ, սինակոկի մը մօտ, վեց զոհ եւ աւելի քան քսան վիրավորներ պատճառուելով:

Կառավարութիւնը փութաց յայտարարելու, որ պայթումը արկածի մը արդիւնքն էր եւ խափառարական ընդթիւնուելու պահանջները սակայն կ'ըսեն, որ պայթումը կրնայ կապ ունենալ իսրայէլի դէմ բարձրացած արարական բարկութեան ու ընդվզումի ալիքին: Թունուզի հրեայ հասանելի էր իսրայէլցի զորքերի կողմէ: Ապահովութեան ծրագրերը սակայն կրնան զգուշ ըլլան իրենց շարժումներուն մէջ:

Պաղեստինեան Թունուզի կառավարութեան ղեկավարը ըսաւ, որ հրեաներ կը հաւատան, որ պայթումին թիրախը Ղրիպա սինակոկն էր, ուր հազարուոց հրեաներ ամէն գարնան ուխտագնացութեան կու գան:

### ՇԱՐՈՆ ՎԱՅՐԱԳ ՊԱՏԱՄԱՆ ՄԸ ՏՈՒԲ...

Շարունակում Ա. Էջեմ

սանձարձակութիւն ոճիրներ գործել», աւելցուց ան: Նախագահ Լահուտ մաղթեց, որ արաբ լրագրողները արաբական աշխարհի ձայնը լսելի դարձնեն աշխարհի բոլոր պետութիւններուն մօտ եւ դիմադրեն լրատուական միջոցներով հզօր սիոնականութեան արշաւին, «որովհետեւ մեր ուժը իրաւունքի ուժն է»: Նախագահ Լահուտ երէկ ընդունեց այցելութիւնները երեսփոխաններ Մոհամէտ Սաֆատիի, Նապիլ Պուսթամիի եւ Ահմէտ Հոպուսի, բանակի հրամանատար գոր. Միշէլ Սլէյմանի, ամբիկեան «Ալէյն Ժիլոտ» հիւանդանոցի պատուիրակութեան եւ Ֆրանսախօս երկիրներու կազմակերպութեան մէջ նախագահի ներկայացուցիչ Շարլ Ռեզգի:

Իրաքի մէջ արգելափակուած քուէյթցի գերիններու հարցի յանձնախումբի պատուիրակութիւնը, քուէյթցի երեսփոխան Սալէհ Եուսէֆ Ֆատալիի ղեկավարութեամբ երէկ այցելեց նախագահ Լահուտի եւ պահանջեց արաբական վեցամսեայ նախագահի հանգամանքով միջամտել այս մարդկային հարցի լուծումին համար: Նախագահ Լահուտ խոստացաւ աշխատիլ վեցամսեայ ժամանակով որոշումներու գործադրութեան համար: